

book
PLATFORM

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԵՐԵՆԻՑ,
ՍԿՍԱԾ 1991-Ի**

Փաստեր, միտումներ, հանձնարարականներ

ԳՐՔԻ ՀԱՐԹԱԿ Ժրագիրը աջակցում է Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի գրքի ոլորտների զարգացմանը

Գրքի հարթակ ծրագիրն օգնում է հրատարակիչներին, հեղինակներին, թարգմանիչներին ու նրանց ասոցիացիաներին ձեռք բերելու նոր հմտություններ և պատասխանելու փոփոխվող աշխարհի մարտահրավերներին:

Գրքի հարթակ ծրագիրն աջակցում է թարգմանությունների միջոցով տարածաշրջանային և միջազգային բաց մշակութային հաղորդակցություն կառուցելուն ու նպաստում է մասնագիտական միջսահմանային շփումների աճին:

Գրքի հարթակ ծրագիրը նպաստում է ընթերցանության, հրատարակությունների և թարգմանությունների ապագա խելամիտ քաղաքականությանը՝ առաջարկելով այս ասպարեզներին վերաբերող ճշգրիտ և հուսալի տվյալներ ու վերլուծություններ:

Գրքի հարթակ ծրագիրը ընդգրկում է գրաքաղաքականություն վարողներին, բոլոր շահագրգիռ կողմերին, ՋԼՄ-ներին ու ընդհանուր լսարանին՝ առաջարկելով առցանց աղբյուրներ և կազմակերպելով քննարկումներ ու համապատասխան միջոցառումներ:

Next Page հիմնադրամի, Հայաստանի հրատարակիչների ազգային ասոցիացիայի, Վրաստանի հրատարակիչների և գրավաճառների ասոցիացիայի և Ուկրաինայի հրատարակիչների ֆորումի ծրագիր:

Ընդգրկվեք այս ծրագրում ու բաժանորդագրվեք ծրագրի նորություններին հետևյալ կայքում. www.bookplatform.org

Գրքի հարթակ ծրագիրը հիմնել է Եվրոպական Միությունը՝ Արևելյան Գործընկերության Մշակութային Ծրագրի շրջանակներում:



**EUROEAST
CULTURE**

Այս հրատարակությունը չի ներկայացնում Եվրոպական Հանձնաժողովի կամ Եվրոպական Միության հաստատությունների պաշտոնական տեսակետը: Եվրոպական Հանձնաժողովը ոչ մի պատասխանատվություն չի կրում նրա բովանդակության համար:

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՅԵՐԵՆԻՑ,
ՍԿՍԱԾ 1991-ԻՑ**

Փաստեր, միտումներ, հանձնարարականներ

*Գրքի հարթակ ծրագրի շրջանակներում 11 երկրում
կատարված ուսումնասիրությունների ամփոփումը*

Առանձին երկրների ուսումնասիրությունների հեղինակները.

Հայերենից բուլղարերեն – Հակոբ Օրմանջյան

Հայերենից հուլանդերեն –

Աննա Մարիա Մարտիրոսյան-Մատաար

Հայերենից անգլերեն – Խաչիկ Գրիգորյան

Հայերենից ֆրանսերեն – Հարություն Խաչատրյան

Հայերենից վրացերեն – Լևոն Անանյան

Հայերենից գերմաներեն – Րաֆֆի Կանտյան

Հայերենից իտալերեն – Սոնա Հարությունյան

Հայերենից սերբերեն – Բաբկեն Սիմոնյան

Հայերենից իսպաներեն – Արարատ Ղուկասյան

Հայերենից շվեդերեն – Վահագն Ավեդյան

Հայերենից ուկրաիներեն – Անուշավան Մեսրոպյան

Մատենագիտական տվյալների խմբագրումը –

Դիանա Իոսիֆովայի

Ամփոփումն ու հանձնարարականները –

Նադեժդա Ռադուլովայի և Յանա Փենովայի

Անգլերեն շարադրանքի խմբագրումը – Անջելա Ռոդելի

Հայերեն թարգմանությունը – Մերուժան Հարությունյանի

Հայերեն թարգմանության խմբագրումը –

Էվելինա Բաղդասարյանի

Սույն հրատարակությունը Next Page Foundation-ի պաշտոնական տեսակետը չի ներկայացնում:

This work is licensed
under a Creative Commons
Attribution-NonCommercial-ShareAlike
2.5 License



Գիրքը բաշխվում է միայն անվճար

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թարգմանություններն ինչո՞ւ պետք է «քարտեզավորվեն» 5

Հայերեն թարգմանությունների ուսումնասիրությունների
ծավալը, մեթոդոլոգիան ու սահմանափակումները 7

Ուսումնասիրությունների արդյունքները –
Հայացք՝ դրսից 10

Ուսումնասիրությունների սահմանափակումները 10

*Հայերենից արված թարգմանությունների
«անտեսանելիությունը»* 11

Դինամիկան ու լեզուները 12

Ժանրերն ու հեղինակները 16

Հրատարակիչները 20

Թարգմանիչները 22

Այլ հանգամանքները 24

Ֆինանսավորումն ու աջակցությունը 26

**ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՔԱԴԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ** 29

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՎԱՅՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ 38

**ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Արևիկ Աշխարոյան, 1-ին գրական գործակալություն** 40

Յետևյալ նյութերը անգլերենով ու հայերենով առկա են համացանցի հետևյալ կայքում. www.bookplatform.org

1. Տասնմեկ ուսումնասիրության տեքստերի լրիվ տարբերակները

*Յայերենից բուդդարերենի ուսումնասիրությունը -
Յակոբ Օրմանջյանի*

*Յայերենից հուլանդերենի ուսումնասիրությունը -
Աննա Մարիա Մարտիրոսյան-Մատաարի*

Յայերենից անգլերենի ուսումնասիրությունը - Խաչիկ Գրիգորյանի

*Յայերենից ֆրանսերենի ուսումնասիրությունը -
Յարություն Խաչադուրյանի*

Յայերենից վրացերենի ուսումնասիրությունը - Լևոն Անանյանի

*Յայերենից գերմաներենի ուսումնասիրությունը -
Րաֆֆի Կանտյանի*

*Յայերենից իտալերենի ուսումնասիրությունը -
Սոնա Յարությունյանի*

Յայերենից սերբերենի ուսումնասիրությունը - Բաբկեն Սիմոնյանի

*Յայերենից իսպաներենի ուսումնասիրությունը -
Արարատ Ղուկասյանի*

Յայերենից շվեդերենի ուսումնասիրությունը - Վահագն Ավետյանի

*Յայերենից ուկրաիներենի ուսումնասիրությունը -
Անուշավան Մեսրոպյանի*

2. Մատենագիտական տվյալների մատչելի բազա

3. Թարգմանական ուսումնասիրությունները վարելու պայմաններ և առաջադրված նպատակների ու ցանկալի արդյունքների նկարագրություն

4. Թարգմանությունների հոսքին և այլ տվյալներին վերաբերող ուրիշ օգտակար ուսումնասիրություններ (մեծամասամբ՝ անգլերեն)

Հիշյալ ուսումնասիրություններն ու մատենագրումները ընդգրկում են այն թարգմանությունները, որոնց բնագրերը հայերեն են, և որոնք թարգմանաբար հրատարակվել են թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանում, 1991-2012 թվականներին:

Թարգմանությունն ինչո՞ւ պետք է «քարտեզավորվի»

Թարգմանությունը գաղափարներն ու գրականությունը լեզվական ու մշակութային սահմաններից հանելու ու տարածելու մի անխուսափելի միջոց է: Այն սոսկ տեքստը մի լեզվից մյուսը փոխադրելու միջոց չէ: Սա, ինքնին ու ըստ էության, արվեստ է ու ստեղծագործություն: Թարգմանությունը լեզվի ու մշակույթի անընդհատ հարստանալու բանալին է, ինչը մեզ նաև հիշեցնում է, որ ո՛չ մի լեզու և ո՛չ մի մշակույթ փակ միավոր չէ:

Թարգմանության դերը տարբեր է պատմական տարբեր շրջաններում, և այս տարբեր շրջանների թարգմանության բարորակության չափանիշները նույնպես տարբեր են: Այն պայմանները, որոնք որոշում են, թե ի՞նչ է թարգմանվում, ու ինչպե՞ս է դա հասնում հասցեատիրոջը, պայմանավորված են փոփոխական սոցիալական ու տնտեսական հանգամանքներով և զանազան այլ գործոններով, ինչպիսիք են՝ հեղինակները, թարգմանները, հրատարակիչները, գրագործակալները, ֆինանսավորող կազմակերպությունները և այլն: Ուրիշ խոսքով, այն պայմանները, որոնք որոշում են, թե ի՞նչն է թարգմանվում ու հրատարակվում, ծագում են զանազան շահերի հարուստ բազմազանությունից: Իսկ հրատարակվելուց հետո թարգմանությունն արդեն ապրում է իր ուրույն կյանքով, արդեն՝ թարգմանության լեզվով ու այդ լեզվի հանգամանքներով, և դժվար թե կանխագուշակելի լինի, թե թարգմանությունն ինչպես կընդունի այդ լեզվով ընթերցողը, ու շուկայական ինչ հաջողություն կամ էլ՝ ինչ հետևանքներ կունենա դա:

Թարգմանության հուսքերի քարտեզավորումը (խոսքը հայերենից արվող թարգմանության մասին է), միտք ունի ուղղակի ճշգրիտ պարզելու այն տարբերիչ մեխանիզմները, որոնք ստիպում են, որ այդ թարգմանությունը տեղի ունենա, ինչպես և այդ թարգմանության այն նրբին հետևանքները, որ դա ունի տվյալ երկու լեզվի գրական հաղորդակցության վրա: Այսօրինակ ուսումնասիրությունները

մանավանդ կարևոր են հայերենի պես մի լեզվի համար, որը թարգմանական հարուստ ավանդույթներ ունի, եթե նաև նկատի առնվի, որ սա, որպես բնագրային լեզու, բոլորովին էլ արտոնյալ լեզու չէ: Ուսումնասիրությունների այս ժողովածուն առաջին անգամն է, որ 1990-ից հետո հայերենից արված թարգմանությունների մատենագրություն է տրամադրում՝ տասնմեկ լեզվով: Այս ուսումնասիրությունները հիմնված են ստուգելի էմպիրիկ տվյալների վրա, ու զանազան հետազոտությունների ու վերլուծությունների կարևոր աղբյուր են: Սրանք մատնանշում են, որ Հայաստանում առկա է մի քանի այնպիսի կառուցվածքային թերություն, որոնք խանգարում են, որ Հայաստանը լիարժեք մասնակցի համաշխարհային թարգմանական հոսքին: Նաև ավելորդ չէ նշելը, որ թարգմանական այս հոսքի մեջ կան նաև հաջողություն նկարագրող փաստեր, ինչպես նաև այնպիսի անուններ ու ձոներ՝ նվիրված անհատներին ու առանձին կազմակերպություններին, որոնք թերևս հիմք հանդիսանան հայկական գրվածքներն արտասահմանում տարածելու ռազմավարության ու սրանց տարվածվելն այնտեղ խթանելու համար:

Ամեն մի երկրի համար արված լրիվ ուսումնասիրությունը, ինչպես և սույն ամփոփումը, պետք է որ հետաքրքրեն թարգմանությամբ, հրատարակությամբ ու մշակութային հաղորդակցությամբ շահագրգիռ ամեն մի անհատի թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանում: Սրանցից հնարավոր օգտվողները պետք է որ լինեն թե՛ առանձին անհատները, թե՛ կազմակերպությունները, այսինքն, օտար և հայ հրատարակիչները, գրագործակալները, հեղինակները, թարգմանները, լրագրողներն ու պարբերականները, գրավաճառները, գրաքննադատներն ու հետազոտողները: Եվ այսպես, այս ուսումնասիրություններն ու «Ռազմավարական հանձնարարականների» բաժինը նախատեսված է այն բոլոր մարդկանց համար, ովքեր մշակութային քաղաքականություն են ձևավորում, այսինքն, Հայաստանի զանազան այնպիսի հաստատությունների համար, ինչպիսիք են՝ Սփյուռքի նախարարությունը, Մշակույթի նախարարությունը, Արտաքին գործերի նախարարությունը, Կրթության և գիտության նախարարությունը, դեսպանությունների մշակութային բաժինները, Սփյուռքին կապված կազմակերպությունները, հայագիտական ֆակուլտետները, գրողների միությունները և մնացած պետական, մասնավոր կամ քաղաքացիական այն կազմակերպությունները, որոնք միտք ունեն ավելի բեղուն ձևով խթանելու հայկական մշակույթը արտասահմանում:

Հայերենից արված թարգմանությունների ուսումնասիրության ծավալները, մեթոդոլոգիան ու սահմանափակումները

Սույն ուսումնասիրության նպատակը հայերենից 11 օտար լեզվով արվող թարգմանությունների հոսքերի միտումների վերլուծության համար տվյալներ հավաքելն է: Անկախության հաստատվելուց հետո առաջին անգամն է, որ այսօրինակ մատենագրական տվյալներ են հավաքվում ու սրանք դարձնում են մատչելի:

Այս ուսումնասիրությունը «հայերենից արվող թարգմանություն» ասելով նկատի ունի բոլոր ժանրերի այն գրքերը, որոնք բնագրերը հայերեն են (անկախ հեղինակի քաղաքացիությունից) և որոնք հրատարակվել են գրքի ձևաչափով թե՛ Հայաստանում, թե՛ թարգմանելիք լեզվի երկրում: Ուստի, այս մատենագրությունը բացառում է այն բնագրերը, որոնք լույս են տեսել պարբերականներում, կամ անհատ թարգմանական փորձագետներն են հրատարակել անթղթայիններում, ինչպես և հայկական ծագումով հեղինակների օտար լեզուներով հրատարակած գործերը:

Ուսումնասիրությունն ընդգրկում է 1991-ից սկսված շրջանը, որպեսզի արտացոլի քաղաքական անկախության այն նոր իրադրությունը, ինչը ձևավորվում էր մեկ կենտրոնից ղեկավարվող տնտեսակարգի ու պետական գաղափարախոսական քաղաքականության թելադրանքով արվող թարգմանությունների շրջանի վերանայուց հետո:

Սույն ուսումնասիրության մեջ ընդգրկված 11 լեզուն, իհարկե, հայերենից արվող թարգմանության լիակատար պատկերը չի տալիս: Հաշվի առնելով այս վերլուծության ժամկետների ու աղբյուրների սահմանափակումները՝ այս 11 լեզուն է ընտրվել որպես լեզուների հիմնական ներկայացուցիչներ, ներառելով նախ՝ Եվրոպայի հրատարակչական ամենամեծ շուկաները (անգլիական, գերմանական, ֆրանսիական), երկրորդ՝ Եվրոպայի մնացած գլխավոր լեզուները (իսպաներենն ու իտալերենը), երրորդ՝ Եվրոպայի շրջակա տարածքից երկու լեզու (վրացերենն ու ուկրաիներենը), ինչպես նաև եվրոպական մի քանի ավելի փոքր լեզու (սերբերենը, շվեդերենը, հոլանդերենն ու բուլղարերենը):

Սույն ամփոփիչ ուսումնասիրության անհատական ուսումնասիրությունների մեթոդոլոգիան ներառում է հետևյալ բաղադրիչները.

- Առանձին երկրի զանազան աղբյուրներից¹ (Հայաստանի ազգային գրադարանից, պետական ու ակադեմիական գրադարաններից, թարգմաններից ու գիտնականների անձնական արխիվներից, հրատարակիչների կատալոգներից, տվյալների միջազգային բազաներից (UNESCO-ի Index Translationum-ից) ևն) մատենագրական տվյալներ հավաքել:
- Այս տվյալների հետազոտությունը և հարցազրույցների այն շարքը, ինչը վարել է անհատ հետազոտողը թարգմանական հոսքի առանցքային գործիչների հետ՝ թարգմանների, հրատարակիչների, ֆոնդերի ևն:
- Թարգմանությանն ու գրահրատարակությանը վերաբերող առկա նյութերը տվյալ երկրի գրաշուկայից հավաքել:
- Այն երկիր/եզու զեկույցը գրելը, ինչով Գրքի հարթակի տվյալ թիվը մեկնաբանում է թարգմանական հոսքի տվյալ ճյուղը, և ինչը ցույց է տալիս տվյալ ուսումնասիրողի ձեռնարկած դրական այն քայլերը, որոնք պիտի աննկատելի բարելավեն սույն ոլորտի վիճակը:
- Գրքի հարթակի թիվը վերացրել է առկա մատենագիտական նյութի այն զանազան սխալներն ու անժշտությունները, որոնք վերաբերում են մանրամասների բացակայությանը, ուղղագրական միակերպություն հաստատելուն, ժանրերը դասակարգելու զանազան սկզբունքները միակերպ դարձնելուն ևն:
- Վիճակագրական զանազան նյութերը դասդասելը (ըստ թարգմանական լեզուների ու թարգմանվող հեղինակների հանրահայտության ևն):
- Ուսումնասիրությունների ընդհանուր արդյունքները ձևակերպելն ու հայ գրականությունն արտասահմանում զովագրելուն ուղղված ապագա խելամիտ քաղաքականության ռազմավարական ելակետերի հանձնարարականները:

Առանձին երկրների նյութերն ուսումնասիրողներին ընտրել ու ստուգել է ՀԱԱ ԶԿ-ն (Հրատարակիչների ազգային ասոցիացիա Հասարակական կազմակերպությունը, Հայաստան), այն գործընկերային կազմակերպությունը, որն իրագործում է Գրքի հարթակ ծրագիրը Հայաստանում: Բոլոր ուսումնասիրությունների հեղինակներն² ունեն զանազան կրթություն ու պատրաստվածություն, և դրանց մեծ մասը (չնայած՝ ոչ բոլորը) բնակվում ու գործում են տվյալ թիրախային երկրում, և դրանցից ամեն մեկը, իր իսկ

¹ Առանձին երկրի հետազոտողի մասին տեղեկությունները զետեղված են անհատական ուսումնասիրությունների մեջ:

² Այս մատենագրական ու նման այլ աղբյուրների ցուցակը զետեղված է յուրաքանչյուր ուսումնասիրության վերջում:

մասնագիտական կողմնորոշության (թարգմանի, ակադեմիական հետազոտողի, հրատարակչի կամ լրագրողի ևն) թելադրանքով առնչվում է գրքի ոլորտին:

Ցավոք, ուսումնասիրությունների ընթացքում հետազոտողներից ոմանք բախվում էին մի շարք այնպիսի խոչընդոտների, որոնք մեծ մասամբ վերաբերում են տվյալների վստահելիության պակասին: Այս խոչընդոտներից գլխավորներն են.

- Index Translationum առկա տեղեկատվության անկատարությունը: Չնայած ենթադրվում է, որ Index-ը պիտի լինի «թարգմանությունների տվյալների համաշխարհային բազա», միևնույն է, սա հիմնվում է այն տեղեկությունների վրա, ինչը տրամադրել են համապատասխան պետական գրադարանները: Ուրեմն, այս Index-ը պարունակում է այն բոլոր անձնություններն ու սխալները, որոնք առկա են համապատասխան պետական գրադարանների տեղեկատուներում:
- Պետական գրադարանների տեղեկատուների բացթողումները, մանավանդ, երբ խոսքը բնագրային այնպիսի քիչ հանրահայտ լեզուների մասին է, ինչպիսին հայերենն է: Որոշ երկրների նշված տեղեկատուները հաճախ չեն հիշատակում թարգմանած գործի բնագրի լեզուն, կամ էլ նույնիսկ հեղինակի ազգային պատկանելության լեզուն նույնացնում են բնագրի լեզվի հետ:
- ISBN-ների բացակայությունը: Սա վերաբերում է մանավանդ հենց Հայաստանում հրատարակված թարգմանություններին, մանավանդ 1990-ականների խառնաշփոթ շրջանին, ինչպես նաև այն գրքերին, որոնք հրատարակել են արտասահմանի փոքր ընկերությունները, ՀԿ-ներն ու փոքր հիմնադրամները: ISBN-ի բացակայությունը հրատարակությունը դարձնում է մատենագետներին ու գրքի ողջ շուկային «անտեսանելի»:

Սա է պատճառը, որ բացարձակ անթերի մատենագրումն անհնար է, ու շատ հավանական է, որ սույն մատենագրական աշխատանքը ներառում է 11 լեզվով առկա թարգմանությունների մոտ 90 տոկոսը:

Ուսումնասիրությունների արդյունքները – Հայացք՝ դրսից

Ուսումնասիրությունների սահմանափակումները

Սույն ամփոփումը հիմնված է միայն այն տվյալների ու վերլուծությունների վրա, որոնք առկա են հիշյալ 11 երկրի ուսումնասիրություններում: Այնուամենայնիվ, առանձին երկրների ուսումնասիրություններն իրենց որակով իրարից շատ են տարբեր, ու շատ անգամ բավարար տեղեկություն չեն տալիս, որ հավաստի եզրակացություն արվի: Չնայած այն հանգամանքին, որ առանձին հետազոտողներին տրամադրվել էր սպասելիք «Նկարագրության մանրամասն պայմանները» (ՆՄՊ-ները)³, հետազոտողները, այնուամենայնիվ, սրանք յուրովի էին մեկնաբանել կամ չէին մնացել ՆՄՊ-ների շրջանակներում: Ըստ էության, առանձին բոլոր ուսումնասիրություններն էլ Հայաստանի մշակութային կապերին տվյալ (թարգմանելիք լեզվի) երկրի հետ տարբեր կշռի պատմական նշանակություն էին վերագրել՝ ելակետ ընդունելով այդ երկրների միայն մեր օրերի իրավիճակը: Թերևս սա մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ պատմական նախորդ շրջաններում հայ մշակույթի ու գրվածքների համաշխարհային հասանելիությունն այժմ անգերազանցելի է: Սա ստիպել է, որ առանձին հետազոտողներ կենտրոնանան ավելի շատ անցյալի, քան ներկայի վրա: Առհասարակ, այս ուսումնասիրություններն ավելի շատ կենտրոնացել են այն հարցի վրա, թե հայ հեղինակները կամ դրանց գրքերը արդյո՞ք առկա են թարգմանելիք լեզվի երկրում, կամ ինչպե՞ս են դրանք ներկայացնում հայ մշակույթն այդ երկրում, այլ ոչ թե այն *պայմանների* վրա, որոնք հնարավոր են դարձնում նման թարգմանությունները:

Ավելին, տարբեր հետազոտողները գրանունների ստանդարտ դասդասումները տարբեր ձևերով էին մեկնաբանել: Շատ ավելի հաճախ այս մեկնաբանությունների տարբերությունն ու շփոթը վերաբերում է գրանուններն ըստ ժանրերի բաժանելուն և սրանց պերիոդիզացիային: Օրինակ, 19-րդ դարի գրանուններից մի քանիսը զետեղվել էին «Ժամանակակից գեղարվեստական գրականության» ցանկում: Տվյալների վերջնական դասդասության ժամանակ ու խմբագրելիս այս անձտությունների մեծ մասը, ինչքան հնարավոր է, տեսակավորվել է:

Էական բացթողումներից մեկն այն է, որ այս ուսումնասիրությունների մեծ մասը տեղեկություն չի տալիս հրատարակած թարգմանության հետագա կյանքի մասին, այնինչ, թարգմանության իրական կյանքը հենց հրատարակությունից է

³ ՆՄՊ-ն առկա են www.bookplatform.org-ի Studies section-ում:

սկսվում: Այս բացը թույլ չի տալիս, որ ճիշտ գնահատվի տվյալ գրանվան մատչելիությունը (ընթերցողի համար), դրա ընդունելիության աստիճանը տվյալ երկրում կամ էլ դրա շուկայական հաջողությունը: Ուսումնասիրողները, առհասարակ, խուսափում են 1991-ից հետո արված թարգմանությունների որակը գնահատելուց՝ վկայակոչելով արտաքին կարծիքները, որոնք գուցե գոյություն էլ չունեն:

Ուստի, հայերենից արված ապագա թարգմանությունները «քարտեզավորելիս», պետք է այս բացերը վերացվեն՝ խորհրդակցելով մասնագետների հետ, և ուսումնասիրությունները լրացնելով, թարգմանների, հրատարակիչների ու գրավաճառների հետ քննարկելով, ինչպես նաև ավելացնելով լեզուների թիվը (մասնավաճառ ներառելով ռուսերենը, ինչը տարածաշրջանային լեզվական կարևոր միջնորդ է):


Հայերենից արված թարգմանությունների «անտեսանելիությունը»

11 երկրի թարգմանությունների ներկա մատենագիտությունը պարունակում է 221 գրանուձ, ներառյալ այն 14-ը, որոնք թարգմանվել են հենց Հայաստանում: Թերևս այս թիվը շատ քիչ է՝ քսանից ավել տարվա ու 11 թիրախային լեզվի համար, բայց եթե խոսքը մշակութային հաղորդակցության մասին է, նման թվերը չեն, որ վճռորոշ են: Ավելի շուտ, վճռորոշն այն չափն է, ինչով հայկական գրվածքները մասնակից են գաղափարների ու ստեղծագործության ժամանակակից երկխոսությանը, ինչը թվերով չի չափվում, այլ գնահատվում է շատ ավելի վերացական գործոններով: Այս վերացական գործոնները վերաբերում են հայերեն գործերի ու սրանց հեղինակների մասնակցությանը արտերկրի գրաշուկաներին, ինչպես նաև արդեն հրատարակված թարգմանությունների իրական առկայությանը տվյալ երկրի գրական դաշտում: Ցավոք, նույնիսկ այն լեզուներով հայերենից արված թարգմանությունները, որոնց թիվը ամենաշատն է, զգալի չափով չեն «ներգրավվում» այդ լեզուների գրականության ու մշակույթի մեջ: Ամփոփված 11 ուսումնասիրությունից ոչ մեկն էլ չի ներկայացնում այնպիսի թարգմանություններ, որոնք իրենց գրական ու մտավոր կամ շուկայական արժանիքներով ժխտեն ասվածը: Հաջողություն վայելած առանձին պատմվածքները թերևս չեն հարուցում արտերկրի հրատարակիչների մշտական հետաքրքրությունը հայ գրականության նկատմամբ ու ծանապարհի չեն հարթում նոր թարգմանությունների համար: Չնայած ասվածը երկի բազում բացատրություն ունենա (ներառյալ քաղաքական ու աշխարհաքաղաքական պատժառնները), այս զեկույցի վերջին բաժնում բերել ենք այն գործոնների ցանկը, որոնք ցույց են տալիս, թե անհրաժեշտ որ նախապայամաններն են բացակա, որպեսզի թարգմանությունների միջոցով իրական ու զգալի հաղորդակցություն տեղի ունենա:

Դինամիկան ու լեզուները

1991-ից արված թարգմանությունների կորը զգալի միտումներ չի ցուցադրում, բացի այն հանգամանքը, որ թարգմանությունների թիվը 2000 թվականից հետո թեթևակի նվազել է՝ նախորդ շրջանի համեմատ: 1990-ականների սկզբում այս թարգմանության նկատմամբ հետաքրքրության աստիճանական աճ կա, ինչը առավելագույնն է 1995-ին, երբ յոթ լեզվով 11 գրանուն է թարգմանվել: 2010-ին 22 գրանուն է թարգմանվել՝ մի քանի լեզվով: Այդ տարին նույնպես առանձնանում է իր չորս գրանունով, որ հրատարակվել են անգլերենով, Անգլիայում (տես ստորև, *Յրատարակիչները* բաժնում), և երկու գրանունով՝ Գերմանիայում:

Թարգմանության դինամիկան սկսած 1991-ից




Թարգմանությունների թվի նվազումը (1990-ականներին), անկասկած, վերագրելի է այդ շրջանի խառնաշփոթին (ոչ միայն քաղաքական առումով, այլև մշակութային), ինչն առկա էր նախկին երկաթյա վարագույրի այս կողմում՝ ամենուր: Թերևս բացառությամբ ռուսերենի, միջազգային հանրության հետաքրքրության աճը նորանկախ պետությունների մշակույթի ու գրականության նկատմամբ այդպես էլ չստիպեց, որ այս լեզուներից արվող թարգմանությունների թիվն զգալի աճի՝ մինչև 1990-ականների վերջը:

Այս 11 թիրախային լեզվով ուսումնասիրություններից երկի հայերենից ֆրանսերեն արված թարգմանությունների

թիվն է ամենամեծը: Այս առումով, թերևս հայերենից արված թարգմանությունները հետևում են թարգմանական հոսքերի եվրոպական ընդհանուր միտումներին, որովհետև Ֆրանսիան այժմ ունի (ողջ գրարտադրության մեջ) թարգմանության ամենաբարձր տոկոսը⁴:

Թարգմանության լեզուները



Ֆրանսիայի բարեհաճությունը հայերենից թարգմանելու նկատմամբ, անկասկած, բացատրելի է այս երկրում հայկական սփյուռքի խոշոր չափով, ինչը հայերենից ֆրանսերեն թարգմանելու ու հրատարակելու խնդրում առաջատար դեր ունի (տես նաև ստորև, *Չրատարակիչները* բաժինը): Իսկ իտալերենի երկրորդ տեղում լինելն այս հարցում պետք է արդեն զգուշությամբ մեկնաբանվի: Ճիշտն ասած, հայերենից իտալերեն արված 30 թարգմանությունից 7-ը հրատարակվել է հենց Չայաստանում: Անկախ այս յոթը թարգմանության ու հրատարակությունների որակից, այսօրինակ հրատարակությունները համարյա ոչ մի հնարավորություն չունեն շրջանառվելու որևէ այլ երկրի գրաբաշխական համակարգում ու գրավելու գրաքննադատների՝ ուրեմն նաև, ընթերցող հասարակության ուշադրությունը: Բացի սա, իտալերեն թարգմանությունների հետազոտողն հենց ինքն է ասում.

⁴ Տարեկան մոտ 15 տոկոս, ինչն ավելի շատ է, քան Գերմանիայինը, ով վերջերս առաջատարն էր, իսկ այժմ իր թարգմանական այս տոկոսը մոտ 13 է:

«Հայերենից իտալերեն թարգմանությունների ծավալի գերակշիռ մասը գրաբարից է»:

Հայերենից վրացերեն արված թարգմանությունների մեծ մասն արվել է 2000-ից հետո՝ այս երկու երկրի գրողների միությունների նախնինում հաստատված կապերի միջնորդությամբ: Պետք է անսպասման նշվի, որ ի տարբերություն մնացած լեզուների մեծ մասի, վրացերեն թարգմանությունները հիմնականում արվել են ժամանակակից գրողներից:

Եվրոպական երկու այլ լեզվով՝ բուլղարերենով ու սերբերենով հայերենից արված թարգմանությունների առատությունը (հարաբերական առումով) թերևս բացատրվում է այն երկու եռանդուն թարգմանի ջանքերով, ովքեր իրենց երկրներում ամեն կերպ խթանում են հայերենից թարգմանությունը, ինչի արդյունքում սրանց համապատասխան թվերն են՝ 22 ու 12 գրանուն:


Գերմանալեզու շուկան առկա է այս դիագրամի վրա իր 16 գրանունով, բայց, փաստորեն, դրանցից չորսը կրկին հրատարակվել է հենց Հայաստանում: Հաշվի առնելով, որ գերմանական ու ավստրիական հրատարակիչներն առաջատար դեր ունեն հետխորհրդային տիրույթից եվրոպական լեզուներով արված թարգմանությունների ոլորտում, հայերենից գերմաներեն արված թարգմանությունների հարցը թերևս բավարար հետազոտված չէ: Անգլերենը, ինչն այսօրվա *lingua Franca*-ն է («միջազգային» լեզուն է - *թարգմ.*), դիագրամի վրա ներկայանում է Միացյալ Թագավորությունում հրատարակված 26 գրանունով: Անգլերենով արված թարգմանությունների մեծագույն մասը հրատարակել են Սվիյուեքի հրատարակիչները կամ մշակութային կազմակերպությունները (տես նաև *Հրատարակիչները* բաժինը), և սրանք այժմ տպագրության մեջ չեն: Օքսֆորդի համալսարանի (Oxford University Press-ի) հրատարակած երկու գրանունը, ըստ էության, թարգմանվել է նախնական աղբյուրից:

Եվրոպական այնպիսի մեծ լեզուներով արված թարգմանությունները, ինչպիսիք են անգլերենը, ֆրանսերենն ու գերմաներենը, ոչ միայն թույլ են տալիս, որ հայ գրականությունը մատչելի դառնա այս լեզուներով, այլև հաճախ սրանք «կամուրջ են» նաև այլ լեզուներով թարգմանությունների համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս, որ հրատարակիչներն ու գրական գործակալները գնահատեն այս թարգմանություններն ու հասու լինեն սրանց:

Ի տարբերություն քիչ գործածվող «վոքը» լեզուներից շատերի, հայերենից արված թարգմանությունները մեծագույն մասամբ բնագրից են: Անկասկած, պատճառը երկլեզու հայերի մեծ թիվն է:

Մի քանի երկրում պատճառը հայագիտական հետազոտությունների առկայությունն է այդ երկրների գիտական հիմնարկներում: Երբ հայերեն գործերի թարգմանությունը բնագրից չէ, դա արվում է մեծ մասամբ ռուսերենի միջնորդությամբ (անուղղակի թարգմանության 77%-ը), կամ անգլերենի միջնորդությամբ (23%-ը): Անուղղակի թարգմանությունների մեծ մասը գերմաներենով է:

Ուղղակի և անուղղակի թարգմանությունները



Ժանրերն ու հեղինակները

Իտալացի հրատարակիչների ուշադրությունն են հրավիրում մի հանգամանքի վրա. այս իրավիճակում տեղին է, որ նորագույն շրջանի (1800-2000-ի) վեպերն ու բանաստեղծությունները թարգմանվեն իտալերեն, որպեսզի համամարդկային մշակույթի ավելի ամբողջական պատկերն ունենանք, մի մշակույթ, ինչի ընթացքը վերջին մի քանի դարում ուղղակի արտառոց է՝ այնպիսի իրարից տարբեր վայրերում, ինչպիսիք են՝ Վենետիկը, Թբիլիսին ու Ստամբուլը:

Անտոնիա Արսլան⁵, վիպասան

Հայերենից արված թարգմանությունները քիչ են տարվածված իրենց իսկ հատուկ ներհուն դժվարությունների պատճառով, այնինչ, այսօրվա հայ գրականությունը պետք է որ շատ լավը լինի, ինչպես որ ցույց են տալիս Վարուժանի բանաստեղծությունների թարգմանությունները: Իտալական հայագետների գլխավոր ջանքերն այս մտահոգությանը վերաբերող գաղափարներն ու գործունեությունը ուղղորդելու առումով պետք է որ շատ կարևոր լինեն:


Պրոֆեսոր Ալդո Ֆերարի, Վենետիկ
(Aldo Ferrari, Cn Foscarì University)

Հայերենից արված թարգմանության ժանրային դասդասությունը ցույց է տալիս, որ վերջին 20-22 տարում չափազանց թարգմանությունը գերազանցում է գեղարվեստական արձակը: Թե՛ դասական, թե՛ ժամանակակից պոեզիան բոլոր թարգմանությունների շուրջ մեկ երրորդն է: Ավելի ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ վիճակագրության մեջ պոեզիայի այս գերակշռությունը մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ այս ժանրի 36 գրանունից 7-ը թարգմանություն է վրացերենով:

⁵ Անտոնիա Արսլանը հայկական ծագումով իտալացի հռչակավոր գրող ու հետազոտող է: Ծնվել է 1938-ին, կրթությամբ հնէաբան է, իտալական գրականության պրոֆեսոր է, վիպասան է ու թարգման ու իտալական բազում (նաև երկու հայկական) գրական մրցանակի տեր է: Գրում է նաև հայկական թեմաներով, իտալերեն է թարգմանել Դանիել Վարուժանի բանաստեղծությունների երկհատորյակը: (Թարգմանի ծանոթ.)

Չնայած այն փաստին, որ հրատարակիչների մեծագույն մասին ավելի շատ հետաքրքրում է գեղարվեստական արձակը (սա վաճառելն ավելի հեշտ է, ու հաճախ սրա թարգմանությունն էլ է ավելի հեշտ, մանավանդ ժամանակակից արձակինը), այնուամենայնիվ, հայ գրականության այս վերջին ժանրի մեծ մասը չի թարգմանվել մեծ լեզուներով: Մատենագրության մեջ թվարկած «ժամանակակից արձակի» 17 գրանունը, ըստ էության, ընդգրկում է Սփյուռքի գրողներին, ինչպես նաև 19-րդ դարի հայ հեղինակներին:

Թարգմանական ժանրերը



Չայաստանի քրիստոնեական կարևոր գրական ժառանգությունը ներկայացված է «աստվածաբանություն և սուրբ տեքստեր» դասի մեջ և ունի 29 գրանուն: Այս տեքստերը՝ սրբերի կյանքը, կրոնական գրվածքների մեկնությունները ևն, որ գալիս են քրիստոնեական ավանդույթից, տարօրինակ է, որ տեղ են գտել «սոցիալական գիտություններ ու հասարակագիտություն» բաժնում, դժվարացնելով ժամանակակից «սոցիալական գիտությունների ու հասարակագիտության» առկայության գնահատականը թարգմանությունների մեջ:

Առկա մատենագիտությունից թերևս վիճակագրական շատ եզրակացություն արվեր, բայց քանի որ գրանունների ու լեզուների թիվը փոքր է, ընդհանրացումները զուցե արհեստական թվան: Այնուամենայնիվ, ամփոփելով ասենք, թե ամբողջական


տպավորությունն այն է, որ հայ պատմության, հայ քրիստոնեության, հայերեն լեզվի ու Հայոց Մեծ Եղեռնի թեմաները գերակշիռ են:

Առ այսօր Հոլիանդացի Թումանյանն ամենաշատ թարգմանվող հայ հեղինակն է⁶: Թարգմանվել են իր թե՛ բանաստեղծությունները, թե՛ պատմվածքներն ու հեքիաթները, հինգը լեզվով՝ 11 գրանոն:

Դիագրամը ցույց է տալիս, որ 12 ամենաշատ թարգմանվող հեղինակից գրանուների այս ողջ քանակի մեջ առանձնանում են (նաև թարգմանության լեզուների բազմազանությամբ) Թումանյանը, Նարեկացին, Րաֆֆին, այնինչ, այդ շարքից հետևյալ հեղինակները, Եղիշեն, Սիմոնյանը, Բախչինյանը և Եսայանը, թարգմանվել են միայն մեկ լեզվով:

Աչքի զարնող է, որ ժամանակակից հայ գրողների թիվն այս դիագրամի վրա շատ քիչ է: Լևոն Խեչոյանը շատ է թարգմանվել ուկրաիներեն (չորս գրանոն), բայց անգլերենով կա իր միայն մեկ գրանոնը, իսկ Ֆելիքս Բախչինյանից 1991-ից թարգմանված չորս գրանոնը միայն վրացերենով է:

Ամենաշատ թարգմանվող հեղինակները և լեզուները



Մնացած հեղինակները, ովքեր մեկից ավել գրանոն և/կամ մեկից ավել լեզվով թարգմանություն ունեն, հետևյալներն են՝ Ակսել Բակունցը, Արամ Անդրյանը, Արմենուի Կեվոնյանը (Armznouhie

⁶ Օգտագործել են հետազոտողների ընտրած հայերեն անունների տառադարձության համակարգից:

Kevonian), Ծատուր Բերբերյանը, Հրանտ Մաթևոսյանը, Մարինե Պետրոսյանը, Պարույր Սևակը, Պերճ Ջեյթունցյանը, Ռիտա Սուլահյան Կույումջյանը (Rita Soulahian Kuyumjian), Սիլվա Կապուտիկյանը, Սոնա Վանը, Վահրամ Դադրիյանը, Եղիշե Չարենցը, Զահրատը (Zareh Yaldizciyan):

Գրական անթոլոգիաների ու այլ ժողովածուների մասին պիտի առանձին ասվի: Մատենագիտությունն ընդգրկում է 15 գրական անթոլոգիա, ինչպես նաև առակների, ասացվածքների ու պատմական փաստաթղթերի մի քանի ժողովածու: Անթոլոգիաների այս մեծ քանակը վկայում է, որ սրանք համարվում են շատ լավ հնարավորություն՝ Հայաստանի գրականությունը, հայ հեղինակներին ու գրական շարժերը ներկայացնելու համար: Անթոլոգիաներից մի քանիսը ժանրային է, կամ ներկայացնում է պատմական որոշակի մի շրջան, մյուսներն ավելի խառն են թե՛ ժանրերի, թե՛ գրական ոճերի, թե՛ պատմական շրջանների տեսանկյունից, այս կերպ ձգտելով հայերենից այլ լեզուներով արվող թարգմանությունների պակասը միանգամից փոխհատուցելուն:

Անթոլոգիաների ամենամեծ թիվը վրացերենով է՝ հինգ գրանոն, չափածո ու արձակ: Կա երեք այսպիսի գրանոն՝ գերմաներենով, երկուսն էլ՝ ֆրանսերենով: Անթոլոգիա հրատարակելու այս կիրքը թերևս հատուկ է հենց հայ հրատարակիչներին. այս 15-ից երեքը թարգմանվել ու հրատարակվել է Հայաստանում, այն նպատակով, որ «գրական արտահանություն» արվի Գերմանիա (2) և Ուկրաինա (1):

Հրատարակիչները

Առևտրային նպատակով գիրք հրատարակելը, իր իսկ էությանը, անհատական ձեռնարկ է, ինչն ապակենտրոնացված է, փոփոխական՝ ըստ պահի պահանջների, ու անձնական: Ամենահաջողը սա իրագործում է նույն մտածելակերպով այն մարդկանց խումբը, ովքեր նվիրված են իրենց արհեստին, իրենց ինքնուրույնության նախանձախնդիրն են, և զգայուն են գրողների կարիքների ու ընթերցողների բազմազան շահերի նկատմամբ: Եթե այս մարդկանց գլխավոր նպատակը միայն փողը լիներ, շատ հավանական է, որ սրանք ուրիշ կարիերա ընտրեին:

Ջեյսոն Էպշտեյն, «Գրքի բիզնեսը: Հրատարակչության անցյալը, ներկան ու ապագան», 2001:
Jason Epstein in Book Business:
Publishing Past, Present and Future

Երբ աչքի ես անցկացնում այս մատենագրության մեջ առկա հրատարակիչների ցուցակը, թվում է, թե այն լրիվ հաստատում է Ջեյսոն Էպշտեյնի խոսքերը. Թվում է, թե հայերեն գործերի թարգմանությունների հրատարակությունը մի ինքնահոս, անհատական ու ռիսկոտ ձեռնարկ է: Հենց առաջին հայացքից երևում է, որ հրատարակչությունների քանակը վիթխարի է: Առկա են թե՛ մեծ առևտրական, թե՛ համալսարանական ու ակադեմիական հրատարակչություններ, թե՛ անհատ ձեռներեցներ ու տպագրիչներ, ինչպես նաև այնպիսի՝ հրատարակիչներ, ում պրոֆիլը հաստատելն անհնար է: Ավելի ուշադիր զննությամբ երեք ընդհանուր միտում է ուրվագծվում: Նախ՝ աչքի է զարնում Սփյուռքի հրատարակիչների գերակշիռ առկայությունը՝ եվրոպական երկու գլխավոր լեզվով (անգլերենով ու ֆրանսերենով) արված թարգմանություններում: Սրանք են՝ Editions Parentheses-ը, Sigest-ը, Editions Le Cercle d'écrits caucasiens-ը, և Editions Sources d'Arménie in France-ը Ֆրանսիայում և Gomidas Institute-ը (սրա բազան ԱՄՆ-ում է), սա կից է Taderon Press-ին՝ անգլերենով թարգմանությունների համար: Գերմանիայի հրատարակիչների դաշտն ավելի բազմազան է ու ներառում է հեքիաթների մի վաղ հրատարակություն, Insel Verlag-ինը (ինչն այդ օրերից անցել է Surkhamp-ին), մի առանձին գործ, C. H. Beck-ինը⁷, նորարար ու փոքրածավալ հրատարակիչ Nora Verlag-ի

⁷ Annäherung an Armenien-ի հետ համատեղ, Tessa Hoffman-ի

երկու թարգմանությունը, և մի քանի փոքր հրատարակիչ՝ մեկական հայկական գրանունով՝ իրենց կատալոգներում: Պետք է անպայման նշվի ավստրիական Wieser Verlag-ը, ինչը կենտրոնացել է միայն «ոչ գլխավոր» լեզուների վրա և 2009-ին հրատարակել է ժամանակակից հայ գեղարվեստական գրականության անթոլոգիա:

Մյուս տեսանկյունից խումբը համալսարանական հրատարակիչներին է (օրինակ, Oxford University Press-ինը) կամ գիտական ուղղվածությամբ մեծ հրատարակչություններինը, ու սա առկա է իրենց կատալոգներում (օրինակ, Gallimard-ինը): Սրանք մասնագիտացել են պատմական, բանասիրական ու աստվածաբանական գործերի հրատարակությամբ ու ունեն իրենց հատուկ սահմանափակ շրջանառությունը: Լույնիսկ գիտական հրատարակությունների մասով, ավելի շատ պատմական բնագրային աղբյուրներն են թարգմանվում, քան սոցիալական ու հասարակական գիտությունների բնագավառի ժամանակակից հայ ուսումնասիրությունները:

Երրորդ ակնհայտ խումբը կազմում են այն կազմակերպությունները, որոնց հիմնական գործը գիրք հրատարակելը չէ, օրինակ, հիմնադրամները, գրադարանները, զանազան «ընկերություններն ու միությունները», ինչպես նաև քրիստոնեական ցանցերն ու կազմակերպությունները: Սրանց հրատարակությունները համարյա չեն մտնում գրաշուկա ու համարյա չեն հասնում տվյալ երկրի ընդհանուր ընթերցողին: Ցավոք, հրատարակիչների ցուցակը չի ընդգրկում գոնե մեկին՝ այն անկախ ու որակյալ հրատարակիչներից, ովքեր հայտնի են եվրոպական մեծ լեզուներով քիչ հանրահայտ գրականությունը ներմուծելով գրաշուկա: Հրատարակչությունների ցուցակների նույնիսկ այն հաջողակ գրանունները, որոնք «արդեն հարմարվել են» բազմամշակութայնությանը⁸, առայժմ հազվադեպ են:

Երբ տեղեկություն չկա, թե հրատարակիչն ինչ պատճառներով է սկսում հայերենի այս կամ այն գործի թարգմանությունը կամ տպաքանակի արտադրությունը, կամ ինչպիսին կլինի տվյալ գրանվան շուկայական բախտը, մարդ հաճախ մտածում է, թե մեծ մասամբ (բացառությամբ գիտական գրանունների) այդ հրատարակությունն իրականացել է Հայաստանի հետ թարգմանի ունեցած հատուկ կապերի շնորհիվ:

Եվ վերջինը, բայց ոչ ամենաանկարևորը: Հայաստանում դեռ գործում է հայերենից այլ լեզվով թարգմանելու ու հրատարակելու

Geschichte und Gegenwart գործը, ինչը չնայած կա գերմաներեն թարգմանությունների ուսումնասիրության մատենագրության մեջ, բայց շատ հավանական է, որ բոլորովին էլ թարգմանություն չի:

⁸ Ըստ իտալերեն թարգմանությունների ուսումնասիրության հեղինակ Աննա Սիրինյանի մի խելացի դիտողության, իր հետ հարցազրույցի ժամանակ:

հետ կապված բոլոր աշխատանքներն իրար հետ իրականացնելու ավանդույթը: Սույն մատենագրությունը պարունակում է 14 գրանուն, որոնք թարգմանվել ու հրատարակվել են հենց Հայաստանում. յոթը՝ իտալերեն, չորսը՝ գերմաներեն, երկուսը՝ վրացերեն և մեկը՝ ուկրաիներեն: Խիստ հավանական է, որ այսպիսի թարգմանությունների թիվը շատ ավելի շատ է, բայց սրանցից միայն մի քանիսն է առկա մատենագրական տվյալների բազաներում: Հայաստանի այն հրատարակիչները, ովքեր այսպիսի գրանուններ ունեն, հետևյալներն են՝ Նաիրի, Սարգիս Խաչենց, Ապոլոն, Երևանի պետական համալսարան, Ամարաս, ԱրՊրինտ, Ոսկան Երեվանցի, Գրաբեր, Ջանգակ և ավելի շատ՝ Ընդհանրականը: Ուսումնասիրողների մեծ մասը չի մեկնաբանում սրանց թարգմանությունները: Ինչևէ, գրքի արտասահմանյան մանրածախ առևտրականների ցուցակներին նետած թռուցիկ հայացքը ցույց է տալիս, որ այս գործերից ոչ մեկն այնտեղ չկա⁹:

Թարգմանիչները

Անկասկած, հայերեն գործերի թարգմանության կենտրոնական դեմքը թարգմանն է: Թարգմանի դերը շատ ավելին է, քան լոկ թարգմանությունը: Թարգմանը մի «բազմադեմ միջնորդ» է, ով մասնակից է հրատարակչության ողջ ընթացքին: Թարգմանն է ընտրում գործը, համոզում հարատարակչին, որ հրատարակի, փող է ծարում դրա համար և մասնակցում է հրատարակված գրանվան վաճառքը շուկայում խթանելուն: Ուրիշ խոսքով, հենց թարգմանն է հայերեն տեքստի ու դրա թարգմանության մշակութային գլխավոր միջնորդը:

Հայերենից թարգմանողների մեծագույն մասը Սփյուռքից է¹⁰: Ողջ երկրի թարգմանների համար բնութագրական է, որ թարգմանական մասնագիտական հատուկ վարժանք չունենան, ու թարգմանությամբ իրենց ապրուստը չապահովեն: Ուրեմն, հայերենից թարգմանությունը, ավելի շատ, մի կիրք կամ առաքելություն է, քան մասնագիտություն:

Քանի որ թարգմանական գործերի ծավալը բավարար է թարգմանի ապրուստն ապահովելու համար, նրանք իրենց մասնագիտական հմտությունները զարգացնելու ծախսերը համարում են չափազանց վտանգավոր բան: Թարգմանի վճարի չափն իր գործի

⁹ Բացի արդեն վաճառված մեկ գրանունը, ինչ կար ռուսական կայքերում

¹⁰ Բացի Գերմանիան:

համար կախված է թարգմանելիքի կարգավիճակից այդ երկրում, և ուսումնասիրություններից մի քանիսը վկայում են, որ թարգմանող հաճախ իր աշխատանքի համար ոչ մի վճար չի ստանում:

Հայերենից թարգմանող մի ուրիշ խումբ են կազմում հայագետներն ու այլ գիտնականները (մեծ մասամբ՝ Իտալիայում, ՄԹ-ում ու Գերմանիայում), ում թարգմանական գործունեությունը առնչվում է իրենց հետազոտական շահերին: Օրինակ, Ալդո Ֆերարին (Վենետիկի համալսարանից), ում խոսքերը մեջ են բերված *Հայերենից իտալերեն* ուսումնասիրության մեջ, ասում է. «Թարգմանների մեծ մասի կրթությունը բանասիրական կամ պատմագիտական է, ինչի պատճառով սրանք գերադասում են հնագույն տեքստերի թարգմանությունը, կամ էլ գոնե այն տեքստերինը, որոնք զուտ գեղարվեստական չեն»:

Մանավանդ անհանգստացնող է եվրոպական մի քանի փոքր լեզվով թարգմանության վիճակը, քանի որ սրանցից մի քանիսի համար կամ ոչ մի թարգման չկա (օրինակ, շվեդերենով), կամ կա միայն մեկ գործող թարգման (օրինակ, հոլանդերենով ու սերբերենով):

Թարգմանության լեզվական կամ մասնագիտական վարժանքի, շահագրգիռ հրատարակիչների բացակայությունը թարգմանելիք լեզուների երկրներում, հայերենից թարգմանած գործերի առևտրային ռիսկի, ֆինանսավորման ու թարգմանների ծիգ ու ջանքերի հասարակական գնահատականների բացակայությունն այն գլխավոր գործոններն են, որոնք խոչընդոտում են երիտասարդ ու սկսնակ թարգմաններին, որ նվիրվեն այս գործին:

Ամփոփելով, ասենք, որ այսպիսի թարգմանների ճաշակով ու ընտրությամբ է հայ մշակույթը ներկայանում օտար ընթերցողին, որովհետև հենց թարգմաններն են հայ գրականությունը օտարներին ներկայացնող գլխավոր միջնորդները:

Այլ միջնորդները

Թարգմանիչ լինի, հրատարակիչ կամ նույնիսկ ընթերցող, շուկայի այս միջնորդների մեծագույն մասը հայկական ծագում ունի: Սրա արդյունքը երկու խիստ առանձին շուկան է, մեկը Ֆրանսիայի հայկական հանրությանը, մյուսը ոչ հայ ծագումով տեղացիներինը:

Հարություն Խաչադուրյան, Հայերենից ֆրանսերեն թարգմանության ուսումնասիրությունից

Բացի թարգմանները, ուրիշ դերակատարներ էլ կան, ովքեր եռանդուն գործ են անում հայերենի թարգմանելու ասպարեզում ու տարածում են այս գրականությունը, բայց սրանք էլ են համապատասխան երկրների հայ հանրության անդամ: Թվենք՝ այդ երկրների հայկական ամսագրերն ու թերթերը, երբեմն էլ՝ նույնիսկ վեբկայքերն ու բլոգները: ՀԼՄ-ների այս ներկայացուցիչներն էլ են մեծ մասամբ Սփյուռքից: Հայ գրականության վերաբերյալ զանգվածային արձագանքները ոչ հայկական մամուլում խիստ հազվադեպ են:

Այս ուսումնասիրությունները շատ հազվադեպ են նշում այն իրադարձությունները, որոնք դրական ազդեցություն են ունենում քիչ հայտնի լեզուներով հայերենից թարգմանության դինամիկայի վրա, ինչպիսին են, օրինակ, գրքի միջազգային տոնավաճառներում շնորհանդեսները, հայ հեղինակների մասնակցությունը գրական կամ այլ փառատոներին կամ էլ արվեստի այլ ձևերի մշակութային միջոցառումներին: Այս կարգի ծրագրերից մեկը, ինչը պայքարում է, որ հայ մշակույթը հասնի նաև օտարներին, “*Arménie, mon amie*” փառատոնն է: Սա հայկական մշակույթի մի ամբողջ տարի է, ինչը տեղի է ունենում Ֆրանսիայում: Վահե Արսենի բանաստեղծությունների հոլանդերեն թարգմանության շնորհիվ հեղինակը 2012-ին մասնակցեց չափածոյի *Ռոտերդամի միջազգային փառատոնին*, ու հենց նույն թարգմանության ստիպումնքով էլ հրավիրվեց Լեհաստանի Լյուբլին քաղաքի պոեզիայի “*Czas Poetow*” միջազգային փառատոնին: Հեղինակը ստացավ հոլանդական “*Jambe*” մրցանակը, հորջորջվելով 2010 թվականի լավագույն պոետ: Հայերենից իտալերեն ուսումնասիրությանը կցված է մի եզակի հարցազրույց՝ Անտոնիա Արսլանի հետ, ով թերևս շատ կարևոր աշխատանք է անում՝ աջակցելով հայերեն գործերին (ոչ միայն թարգմանություններին), իր իտալացի հրատարակչի՝ Guerini-ի հետ միասին:

Ինչ վերաբերում է այն մասնագիտական իրադարձություններին ու ծրագրերին, որոնք կխթանեին հայերենից թարգմանելու հոսքերը, պետք է ասվի, որ վրացերենով թարգմանելու ուսումնասիրությունը հիշատակում է այս երկու երկրի երիտասարդ գրողների համար Հայաստանի գրողների միության կազմակերպած ամենամյա «Ստեղծագործական լաբորատորիան» Ծաղկածորում: Ուկրաինական ուսումնասիրությունը մի բաժին ունի՝ ԱՊՀ երկրների թարգմանների Երևանում տեղի ունեցող ամենամյա հավաքների մասին (տես նաև ստորև՝ *Հանձնարարականները* բաժինը): Գերմանիայում գործում է Բեռլինի *Literarisches Colloquium*-ը (*Գրական կոլոքվիումը*), ինչը լավ է հայտնի թե՛ Գերմանիայում, թե՛ արտասահմանում, իր հյուրընկալությամբ օտար գրականության նկատմամբ, ու մի քանի հայ հեղինակ է հյուրընկալել:

Հայ հեղինակների մասնակցությունը բազմապրոֆիլ հրատարակություններին, ծրագրերին ու իրադարձություններին հաճախ հեռու գնացող հետևանքներ է ունենում հայերենից թարգմանած գրականության համար, բայց սույն ուսումնասիրությունները այնքան էլ շատ տեղեկություն չեն տալիս այսպիսի բազմապրոֆիլ իրադարձությունների մասին: Գերմաներենով թարգմանության ուսումնասիրությունը հատուկ նշում է 2000 թվականի *Europaexpress* ծրագիրը, ինչի արդյունքում երկու հայ հեղինակ ընդգրկվեց միջազգային վերջնական ժողովածուի մեջ, ինչպես նաև հետևյալ միջազգային անթոլոգիայի մեջ՝ *“Verschlossen mit silbernem Schlüssel/Literatur aus Armenien, Aserbaidschan, Georgien”* (*Արծաթե բանալիով փակված/Գրականություն՝ Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից*), որ հրատարակվեց Կապպայում /Cappա-ում/:

Հայերենի թարգմանությունները արտասահմանում իրականացնելու մեխանիզմները մեծ մասամբ չեն ընթանում այլ լեզուներով գրքի իրավունքները վաճառելու սովորական ուղով: Պատճառն այնպիսի գլխավոր դերակատարների բացակայությունն է, ինչպիսիք են այն գրական գործակալներն ու եռանդուն հրատարակիչները, ովքեր պիտի խթանեին այս թարգմանություններն արտասահմանում, ու գրողների այնպիսի միությունները, որոնք պիտի ունենային միջազգային ամուր ու հզոր կապեր, տեղեկատվական ուղիներ ու համապատասխան ֆինանսավորողներ:

Ֆինանսավորումն ու աջակցությունը

Չնայած պետական, մասնավոր, միջազգային ու այլ աղբյուրներից ֆինանսավորման կարևորությանը, ներկա 11 ուսումնասիրություններից ոչ մեկն էլ այս հարցը հարկ եղած մանրամասնությամբ չի քննարկում, ինչը հնարավորություն չի տալիս պարզելու, թե այս 221 գրանվան ո՞ր մասն են հենց իրենք, հրատարակիչները ֆինանսավորել, և ո՞ր մասն է շրջանառվում ոչ առևտրային աղբյուրների հաշվին:

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրություններն ավելի շատ թարգմանության լեզվի երկրի ֆինանսական աջակցության (դրանց պետական կամ քաղաքապետարանների, կամ այլ ծրագրերի, կամ Սփյուռքի հիմնադրամների, կամ այլ միությունների) կոնկրետ օրինակներ են բերում, քան հենց Հայաստանի պետական աջակցությունը: Ուսումնասիրություններից միայն մեկն է հատուկ հիշատակում թարգմանությանը պետական աջակցության մասին, ասելով.

«...վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության Մշակույթի Նախարարությունը հնարավորություն է տվել օտարերկրյա հրատարակիչներին, որ դիմեն թարգմանություններին ու մասամբ նաև հրատարակչական ծախսերին աջակցելու համար, հետևյալ կայքում. <http://www.mincult.am>: Թարգմանություններին պիտի աջակցեն տարին մեկ անգամ անցկացվող մրցութային հիմունքներով: Դիմումներն ընդունվում են մինչև օգոստոսի 1-ը, վերջնական որոշումը տրվում է հոկտեմբերի կեսերին: Մեծ մասամբ, դրամաշնորհը տրվում է ոչ ուշ, քան հաջորդ տարվա դեկտեմբերը, այսինքն, 12 ամսում»¹¹:

Բայց ոչ մի կերպ տեղեկություն չգտնվեց այս Նախարարության դրամաշնորհը բաշխելու ուրվագիծը գտնելու, իր ասած թե՛ ռուսերենից, թե՛ հայերենից արված թարգմանությունների վերաբերյալ: Այս կարգի տեղեկատվության բացակայությունը միջազգային հրատարակիչների մասին, նույնիսկ երբ այն դեռ նոր է գործի դրվում, նշանակում է, որ հազիվ թե այն որևէ կերպ նպաստի հայերեն թարգմանությունները տարածելուն:

Պետական աջակցության երկրորդ օրինակը ուկրաինական ուսումնասիրությունն է բերում, հիշատակելով, որ 2012-ին ՀՀ Մշակույթի նախարարությունը աջակցել է ուկրաինական

¹¹ Խաչիկ Գրիգորյանի հայերենից անգլերենի ուսումնասիրությունը (1991-ից մինչև այսօր):

“*Bceceum*” գրական ամսագրի այն համարին, որը նվիրված էր հայ գրականությանն ու հայկական տպագրության 500-ամյակին:

Եվրոպայի ամենամեծ մասնավոր հիմնադրամներից մեկը, Գալուստ Գյուլբենկյանինը, ունի հատուկ մասնաբաժին, որը նվիրված է հայ հանրությանն ու մշակույթին և աջակցում է հրատարակություններին, բայց կենտրոնանում է միայն «հայ գրական ժառանգության» վրա¹²:

Կան նաև այնպիսի անեկդոտային դեպքեր, երբ հայերենից արված թարգմանությունները հրատարակվել են հենց հեղինակի ծախսերով:

Այնուամենայնիվ, դեռ հրատարակիչն է կենտրոնական այն անձը, ով ընտրում, խմբագրում, հրատարակում ու խթանում է թարգմանությունը, ու այս առումով հրատարակիչներին տրվող դրամաշնորհները դեռ բախտորոշ են՝ նպաստելու համար քիչ հայտնի լեզուներով թարգմանություններին: Հրատարակչական ընթացքին զուգահեռ՝ կա «փափուկ գործոնների» մի համակարգ, ինչը նպաստում է թարգմանության զարգացմանը: Այն ընդգրկում է գրական փառատոները, գրքի տոնավաճառները, սեմինարներն ու գործնական քննարկումները, ընթերցումները, վարպետական դասերն ու լեզվի և թարգմանության կառավարումը, գրողին ու թարգմանին ժամանակավոր բնակարան տրամադրելը, պարգևները, գրողին ու թարգմանին դրամաշնորհ տրամադրելը, ցանցային կազմակերպությունները ևն: Սրանք լրացնում են հրատարակչին տրվող ֆոնդերն ու նախապայման են դառնում որակյալ թարգմանության ստեղծման համար:

Ուսումնասիրությունները միայն մի քանի խոշոր նախաձեռնությունն ու ֆինանսավորող են նշում: Դրանք են՝ ֆրանսիական “*Arménie, mon amie*” փառատոնը, ինչը կազմակերպել է *CulturesFrance*-ը ու ֆինանսավորել են Ֆրանսիայի Արտաքին Գործերի և Մշակույթի ու Հաղորդակցության նախարարությունները: Հատուկ ուշադրության է արժանի *ԱՊՀ ու Բայթյան երկրների թարգմանների ու հրատարակիչների ֆորումը*, որ կազմակերպում է ԱՊՀ երկրների Թարգմանների միությունը և ՀՀ Մշակույթի նախարարությունը (ԱՊՀ Միջպետական հումանիտար գործակցության աջակցությամբ) Երևանում, արդեն 6-րդ անգամ: Չնայած անվանումը ենթադրում է, որ այն նախկին Խորհրդային Միության երկրների գործակցություն է, սակայն վերջին տարիներին ընդունում է նաև այլ երկրների մասնակիցներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով հայերենից արվող թարգմանություններին:

¹² Սրա մասին մանրամասն տեղեկություն տես հետևյալ կայքում.
<http://www.gulbenkian.pt/section24artId190langId2.html>:

Ավստոս, որ ուսումնասիրություններից ոչ մեկում խոսք անգամ չի ասվում գրքի միջազգային այնպիսի տոնավաճառներին Յայաստանի մասնակցության մասին, ինչպիսիք են՝ Ֆրանկֆուրտինը, Փարիզինը կամ Լոնդոնինը, որոնց հիմնական դերը իրավունքների վաճառքը հեշտացնելն է:

Կարճ ասած, ուսումնասիրություններում բերված արտաքին ֆինանսական օգնության օրինակները վկայում են, որ սրանք ավելի շուտ պատահական ու ցրիվ նախաձեռնություններ են, որ հաճախ առնչվում են ինչ-որ մի իրադարձության, մի հորեյանի, քաղաքական անցքի կամ էլ պետք են, որ առկա ֆոնդը ծախսվի, այլ ոչ թե հայ մշակույթն օտարներին ներկայացնելու քաղաքականություն են, այսինքն, օրենքով հաստատված գործունեություն են, ինքնանպատակ ռազմավարությամբ ու տևական ֆինանսներով ապահովված:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Սույն ամփոփման այս վերջին մասի նպատակը հայերենից արվող թարգմանությունը խթանելու հնարավոր ռազմավարությունն է: Նախքան դա անելը, առկա թարգմանական ավանդույթի թերություններն ամփոփելու փորձ կարվի: Կարվի նաև միջազգային փորձով հաստատված մի քանի (թերևս օգտակար) առաջարկ:

Առաջարկվող լուծումները բխում են թարգմանությունների առկա 11 ուսումնասիրությունից, ինչպես նաև գրահրատարակությանն ու թարգմանությանն աջակցելու միջազգային փորձից: Հանձնարարականները հիմնականում ուղղված են պետական օրենսդրությամբ այնպիսի ապահով ու հուսալի պայմաններ ստեղծելուն, որոնք կնպաստեն, որ հայ մշակույթի առաջընթացը դառնար հիմնական խնդիրներից մեկը: Բացի այդ, գուցե սույն հանձնարարականներն ստիպեն, որ էլ ավելի շատ կազմակերպություն ընդգրկվի հայերենից արվող թարգմանությունը զորացնելու գործում:

Եվ վերջինը, բայց ոչ ամենաանկարևորը: Հաջորդող շարադրանքը դեռ պետք է ընդարձակվի, լրացվի ու մեկնաբանվի (նաև քննադատելով սա) մի ավելի լայն մասնագիտական քննարկման ժամանակ, ինչը սույն շարադրանքի հիմնական նպատակն է:

Թարգմանական հաղորդակցության մի քանի թերություններ

Բացի այն ընդհանուր գործոնները, որոնք ազդում են թարգմանության վրա ողջ աշխարհում (ինչպես, օրինակ, տնտեսական վիճակն ու ընթերցանության նվազումը), կա մի քանի հատուկ գործոն, որոնցով էլ պայմանավորված է հայերենից արվող թարգմանության ցածր մակարդակը:

Ահա դրանք:

1. Հայերենից արվող թարգմանությունները **մնում են արտասահմանի հայ հանրության ներփակ շրջանակներում**: Հաճախ դրանք ուղղված են հենց այդ հանրությանը, ու թարգմանությունները ընտրում, թարգմանում, հրատարակում ու գրախոսում է հենց Հայ Սփյուռքը: Չնայած արտասահմանի հայ հանրության հզոր աջակցությանը հայ մշակույթին, ըստ էության, այն հաճախ հակաբեղուն է ու խոչընդոտում է, որ սա հասնի նաև ոչ հայկական հանրությանը: Ավելին, սփյուռքի հրատարակիչները,

միություններն ու հիմնադրամներն ավելի շատ մնում են կենտրոնացած անցյալի պատմագիտական ու գրական ժառանգության վրա, քան ներկայի, հաշվի չառնելով ո՛չ գրաշուկայի ներկա միտումները, ոչ էլ այն հանգամանքը, որ մեծ մասամբ դեռ կենդանի հեղինակների միջազգային հաջողությունն է տվյալ պատմության նկատմամբ հետաքրքրություն ստեղծում, և ոչ թե հակառակը:

2. **Թարգմանության ու հայ մշակույթի այս՝ իրոք որ ծանր վիճակի պատճառը ֆինանսական աջակցության պակասն է, հայ մշակույթն արտասահմանում խթանելու երկարաժամկետ ծրագրի բացակայությունը:**
3. Հայ գրականությունը խթանելու զանազան ծիֆերը առայժմ մեկուսի են. ա) իրարից. բ) հայ մշակույթի այլ ճյուղերն արտասահմանում ներկայացնելու իրադարձություններից. գ) այն միջազգային բազմապրոֆիլային նախաձեռնություններից, ցանցերից ու ծրագրերից, որոնք նվիրված են քիչ հայտնի լեզուներին:
4. **Հայաստանում հրատարակվող գործերի թարգմանությունները հազվադեպ են հասնում իրենց հասցեատիրոջը:** Այս հրատարակությունները համարյա հնարավորություն չունեն շրջանառվելու այլ երկրների գրաբաշխական համակարգերում կամ գրավելու դրսի գրախոսների ուշադրությունը, ուրեմն՝ նաև դրսի ընթերցողին: Լավագույնս, այս թարգմանությունները, երբ սրանք տեղացի թարգմաններն են անում, գուցե դառնան տեղական գրողների ու հրատարակիչների այնպիսի «բիզնես-այցեքարտերը», որոնք ցուցադրում են նրանց անօգտակարությունը:
5. Ինչ վերաբերում է «թարգմանության քաղաքականությանը», թվում է, **թե կա մի արտավոր օղակ՝ արտասահմանյան հայության՝ հայ գրականությունը խթանելու ջանքերի արդյունքի ու հայ միջնորդների ջանքերի միջև.** դրսի սպասմունքը քրիստոնեության ու եղեռնի թեմաներից դեմը չի անցնում, իսկ ներսի ջանքերը հաստատում են այս սպասմունքերը:
6. Չկա մատչելի տեղեկություն Հայաստանի գրական ու մշակութային իրադարձությունների մասին, այսինքն, հայտնի չեն կարևոր գործիչների, գրանուների, կազմակերպությունների կամ գրական համբավվող մրցանակների անունները, ինչպես նաև՝ թե կա՞ ժանրային այնպիսի բազմազանություն, որ արտասահմանյան հրատարակիչները հետաքրքրվեն ու ընտրելու հնարավորություն ունենան:

Նոր ռազմավարության հնարավոր սյուները

Հայերենից արվող թարգմանություններն արտասահմանում խթանելու ամեն մի նախաձեռնությունն ու քաղաքականությունը պիտի հաշվի առնի վերևի վեց ելակետը: Այս վեց թերությունը հաղթահարելու համար պիտի հաշվի առնվի ռազմավարական մի քանի գլխավոր դրույթ, որոնք են.

Ավելի մեծ ուշադրություն միջնորդներին:

Ինչպես ցույց են տալիս այս բոլոր ուսումնասիրությունները, հայ գրականությունն օտար լեզուներով ներկայացնելու խնդիրը գրեթե ամբողջովին կախված է թարգմաններից ու թարգմանների ընտրությունից: Ուստի հայագիտական ֆակուլտետները պիտի ավելի շատ ուշադրություն դարձնեն թարգմաններին, և պիտի ավելի լավ հոգ տարվի թարգմանի նյութական ու հոգևոր կարիքների մասին, ու պիտի հետևեն, որ թարգմանական լավ ավանդույթները փոխանցվեն սերնդե սերունդ, և աջակցեն թարգմանների շարունակական վարժանքին ու հաղորդակցությանը՝ աղբյուր ու թարգմանելիք լեզուների հետ: Ու նաև, միջնորդների շրջանը հնարավորություն ունենա լայնանալու ու ընդգրկելու (փոխադարձության սկզբունքով) նոր մարդկանց, օրինակ՝ հայկական ծագումով այնպիսի մշակութային դեմքերի, ովքեր գրում են օտար լեզուներով, կամ օտարազգի այն գրողներին ու լրագրողներին, ովքեր գրում են հայկական թեմաներով:

Թարգմանությունը երկկողմանի հաղորդակցություն է:

Քիչ հայտնի գրականության արտահանությունն սկսվում է «տանը»: Ուրիշ խոսքով, որևէ գրականության միջազգային ուշադրություն գրավելու հնարավորությունները **ուղղակի կախված են այդ գրականության սահմանների բացությունից, այլ աշխարհների հանդեպ դրա «հյուրընկալությունից»**, ինչն արտահայտվում է օտար գրականությունը սեփական լեզվով թարգմանելու մակարդակով, ու գրքի տոնավածառ, փառատոն, ընթերցում կամ նման այլ իրադարձություններ կազմակերպելով: Այս առումով, օտար գրականության հայերեն թարգմանության հազվադեպությունը բացասական է ազդում թե՛ հակադիր ուղղությամբ թարգմանության վրա, թե՛ հայ ընթերցողների ու գրողների վրա, քանզի նրանք այլ լեզուներով մշակված նոր գաղափարներին, ոճերին, թեմաներին ու միտումներին հասու լինելու հնարավորությունը չեն ունենում:

Արտահանությունն ընդդեմ երկխոսության:

Ազգային գրականությունը խթանող ծրագրերի մեծ մասն այս երկուսի տրամաբանությունը միացնում է իրար: Արտահանության տրամաբանությունն իր մշակութային արտադրանքը միջազգային այն շուկաներն արտահանելու փորձն է անում, որոնք արժեքավոր են համարվում հենց արտահանության երկրում, և որոնք կարևոր են համարվում միջազգային հեղինակության տեսանկյունից, և այս կարևորությունը հաստատվում է հենց «տանը» (հաճախ հաստատողը հեղինակավոր հանձնաժողովներն են), հետո այդ արտադրանքը հանում են դրսի շուկա, երբեմն, ֆինանսական առումով՝ ի վնաս իրենց: Մշակութային երկխոսության տրամաբանությունը, մյուս կողմից, ներառում է այն համոզումները, **որ մեկուսիությունը պիտի անպայման հաղթահարվի:** Սա, առնվազն ներառում է տեղեկատվության մատչելիությունը, և գրողների, հրատարակիչների, գրական գործակալների ու թարգմանների մասնակցությունը միջազգային

մշակութային իրադարձություններին, ու թարգմանության ծախսերին աջակցելու գումարները:

Մեկուսի գրականությունն ընդդեմ բազմազան ընթերցողի:

Քիչ հայտնի գրականության խթանումը հաճախ սկսվում է այն գիտակցությունից, թե գրականությունն այդ երկրի «դեսպանն է», ինչը միջազգային մեղմ հարաբերություններ ստեղծելու միջոց է: Նման գիտակցությունը հաճախ ենթադրում է, թե օտար ընթերցողը կծանոթանա այս գրականությանն ու դրա պատմական ողջ ընթացքին իր ողջ խորությամբ, ու կիմանա այդ ընթացքի միայն բարձրագույն նվաճումները: Այս պատվասիրական ելակետը թերևս հարմար չէ այսօրվա հրատարակչական ու ընթերցողական իրականությանը, որովհետև հաշվի չի առնում սրանց ներկայացուցիչների, շահերի և ուղիների բազմազանությունը, ու ամենակարևորը՝ նախասիրությունները: Ուրեմն, գրականությունը խելամիտ խթանող քաղաքականությունը պիտի հաշվի առնի այս բազմազանությունը և հաջորդ հանգամանքը:

Հայերենից արվող թարգմանությունները խթանող հանձնարարելի միջոցները

Այս բաժինը տալիս է այն ստուգված հնարավոր միջոցների հակիրճ ամփոփումը, որոնք կխթանեն մեծ ու փոքր լեզուներով հայերենից արված թարգմանությունները: Սույն շարադրանքը նպատակ չունի մշակելու հայերենից արված թարգմանությունները արտասահմանում խթանելու մանրամասն ռազմավարությունը, այսինքն՝ ռազմավարական հեռանկարը, գործողությունների ծրագիրը, բյուջեն, գործակցության ծրագիրը, ազդեցության հսկողությունն ու գնահատականը ևն: Առաջարկվող միջոցներն արդյունավետ կիրառելու համար առնվազն հարկավոր է. ա) որ դրանք *տևական* լինեն, այսինքն, մեկ-երկուանգամյա չլինեն. բ) թափանցիկ լինեն, այսինքն, դրա նպատակների, ընթացքի ու արդյունքների մասին տեղեկությունները պիտի հայտնի լինեն:

1. Պետք է ստեղծվի հայերենից արվող թարգմանության ու հրատարակման խթանմանն աջակցող գործակալություն

Եվրոպական երկրների մեծ մասում¹³, ինչպես նաև հարևան տարածքներում, օրինակ, Վրաստանում¹⁴, պետք է գործեն այսպիսի գործակալություններ, որոնք պետք է ֆինանսավորվեն միայն կամ մեծ մասամբ պետական աղբյուրներից: Այսպիսի մի մարմնի հաջող գործելու անհրաժեշտ պայմաններն են.

¹³ Բացի Ուկրաինան:

¹⁴ Սրա վերաբերյալ մանրամասն տեղեկություն կա Վրաստանի մշակույթի նախարարության կայքում՝ www.book.gov.ge/index.php?lang=en:

- պիտի ֆինանսավորվեն մեկից ավելի աղքատից, օրինակ, Մշակույթի նախարարությունից, համատեղ՝ մասնավոր հիմնադրամներից և/կամ այլ նախարարություններից, ասենք, ԱԳՆ-ից,
- պիտի լինեն ապակենտրոն, անկախ և/կամ միայն «մեկ քայլ հեռու» Մշակույթի նախարարությունից: Այսինքն, պիտի այնպիսի կառուցվածք ու ֆինանսական մեխանիզմներ ունենան, որոնք կբացառեն կախվածությունը համապատասխան պետական մարմինների քաղաքական կամ վարչական որոշումներից կամ հրահանգներից,
- պիտի կից լինեն մեծ՝ թե՛ պետական, թե՛ միջազգային մակարդակի փորձագիտական ու գործընկերային կազմակերպությունների,
- պիտի աջակցություն ստանան այլ կազմակերպությունների ծրագրերից, որ մրցակցային հիմունքներով ելակետերի բազմազանություն ապահովվի:

2. Դրամաշնորհներն ինչպես պիտի հատկացվեն

Փոքր լեզուներից արվող թարգմանությունները միայն շուկայական մեխանիզմներով չեն գոյատևի: Սրանց գոյատևելու ավանդական միջոցը դրամաշնորհներն են, որոնք լրիվ չեն հատուցում հրատարակչական ծախսերի առևտրական ռիսկերը: Բացի այդ, հրատարակիչներին տրվող դրամաշնորհները միայն այն ժամանակ են լավագույն արդյունքներ տալիս, երբ գործածվում են գրական ու մտավոր հաղորդակցությանն աջակցող այլ տարրերի հետ:

Դրամաշնորհների միջոցով համաֆինանսավորումը պետք է բավարարի առնվազն հետևյալ պայմանները:

- Պիտի բաժանված լինի ենթասխեմաների, ըստ ընթացակարգերի ու կանոնների՝ օտարերկրյա հրատարակիչների, անհատ թարգմանների, պարբերականների համար են:
- Պիտի ունենա նպատակների հստակ դասակարգում և տարանջատ սխեմաներ այս նպատակների համար, օրինակ, «ներկայացուցչական» թարգմանությունների, ժամանակակից տեքստերի, ժանրային գործերի համար են:
- Իր թափանցիկ կառույցներով պիտի բաց լինի օտարերկրյա կազմակերպությունների համար, և իր դինամիկայով պիտի համապատասխանի հրատարակչական ընթացքի դինամիկային, առնվազն տարին երկու անգամ:
- Ի հավելումն իրավունքը գնելու ու թարգմանության ծախսերի, պիտի ունենա նաև մարկետինգի ու խթանելու ծախսեր:
- Պիտի մեկից ավելի տարով գործակցելու այնպիսի ծրագրերի հնարավորություն ունենա, ինչը կներառի գրքանունը հրատարակելուն առնչվող հավելյալ գործունեության մի սպեկտր:

3. Թարգմանական և այլ պարգևներ

Պարգևները (նաև դրամական) այն միջոցներն են, որոնք խթանում են հայերենից թարգմանությանը նվիրված անձանց ու

կազմակերպությունների շարժառիթներն ու տեսանելիությունը: Թարգմանական պարզանքերը ոչ միայն որակի ցուցանիշ են, այլև այն ձևն են, ինչը թարգմանչի բավական «միայնակ» մասնագիտությունը տեսանելի է դարձնում հասարակությանը: Պարզակները մեծ մասամբ տրվում են ոչ միայն մի որոշակի տեքստի համար, այլև միջմշակութային հաղորդակցության մեջ ամբողջական ներդրումների համար, թե՛ առանձին թարգմաններին, թե՛ գրախոսներին, հետազոտողներին, լրագրողներին, խմբագիրներին, գրական գործակալներին ու մշակութային կազմակերպություններին:

4. Թարգմաններին, հեղինակներին, խմբագիրներին ու լրագրողներին հյուրընկալելու ծրագրերը, ներառյալ՝ բնակարանները և երիտասարդ թարգմաններին հատկացվող թոշակներն ու ուսուցողական ծրագրերը

Այսպիսի ծրագրերի նպատակը պիտի լինի հայերենից թարգմանողների հայերեն լեզվի ու հայ մշակույթի հետ կապը պահպանելը, ինչպես նաև հայ մշակույթը խթանող նոր միջնորդներին հրապուրելը: Նման բազում միջոցառումներ արդեն կան, բայց հանձնարարելի են նաև հետևյալները.

- Պիտի ստեղծված արտադրանքը շոշափելի լինի (նոր տեքստ, թարգմանություն):
- Սրանք պիտի բաց լինեն ոչ միայն անհատների համար, այլև թիմերի՝ ներառելով թարգմանների համատեղ աշխատանքը թարգմանելիքի հեղինակների հետ:
- Սրանք պիտի խրախուսեն ա՛յն թարգմանների գործակցությունը, ովքեր նույն հայերեն տեքստը թարգմանում են տարբեր լեզուներով:
- Պիտի հրավիրեն նաև մշակութային պարբերականներում աշխատող գրախոսներին ու լրագրողներին:

Պիտի ընդգրկեն **հյուրընկալելու այլ ձևերը**, ինչպես, օրինակ, միջազգային փառատոներն ու համատեղ ընթերցումները՝ հայ և արտերկրի հեղինակների մասնակցությամբ:

5. Ծարժունության ծրագրերը, որոնք ուղղված են.

- Մեկուսիությունը հաղթահարելուն՝ հեշտացնելով ժամանակակից հայ գրողների մասնակցությունը միջազգային փառատոներին, ընթերցումներին և այլ իրադարձություններին. սա պիտի անեն կազմակերպողները:
- Օգնելուն, որ գրական գործակալների ու գրամենեջերների միջազգային շարժունությունը մեծանա, ու սրանք մասնակցեն գրքի միջազգային տոնավաճառներին, համաժողովներին ու այլ իրադարձություններին, մանավանդ երբ սրանք կապված են որևէ կոնկրետ ծրագրի:
- Գրքի միջազգային տոնավաճառներին մասնակցելու խելամիտ ելակետեր մշակելուն՝ հստակ պատկերացնելով սպասելի արդյունքները, և խելամիտ ընտրելով տոնավաճառն ու դրան ժամանակին պատրաստվելով:

6. Տեղեկատվության ուղիները

Հայկական մշակույթի հասանելիությունն այն գլխավոր առաջին քայլն է, ինչի նպատակը պիտի լինի հայերենից արվող թարգմանությունը խթանելու ենթատեքստ ստեղծելը, մի ենթատեքստ, որը մատչելի ու հասկանալի է միջազգային միջնորդներին: Հնարավոր տեղեկատվական այսպիսի աղբյուրները թերևս բազմազան են, բայց լավ կլինի, որ դրանք բավարարեն հետևյալին.

- Լինեն բազմալեզու:
- Հիմնվեն տարբեր ձևաչափերի վրա, օրինակ, լինեն ոչ միայն տպագիր, այլև՝ թվային:
- Չնայելով գործածող շահառուների պասիվությանը՝ առաջարկվեն եռանդուն ձևով:
- Հաշվի առնեն շուկայի տարբեր հարթակների առկայությունը, լսարանների տարբերությունն ու շահերի տարբերությունը:
Գրական տեղեկատվության առկա լավ օրինակները պիտի ունենան.
- Հեղինակների ու գրանուների տվյալների այնպիսի բազա, ինչը ներառում է առնվազն մեկ գլխավոր լեզվով անոտացիաներ ու թարգմանության նմուշներ: Մասնավանդ կարևոր է, որ տեղեկատվությունն այնպես շարադրվի, որ հարմար լինի հրատարակիչների գործածության համար ու գրված լինի համաձայն վերջիններիս՝ և ոչ թե գրականության պատմության մասնագետների տրամաբանության:
- Հայերեն բնագրի վաճառքի գների թարմ տվյալներ:
- Տեղեկություն, թե արդյոք այդ բնագրի թարգմանությունն արդեն առկա է որևէ այլ լեզվով (օրինակ, սույն հետազոտության առանձին ուսումնասիրությունների լեզուներից մեկով, ինչպես և դրա մասին մատչելի մատենագրական տվյալների բազա, որ մշակված է Գրքի հարթակ ծրագրով):
- Տեղեկություն գրական կամ այլ պարզևների մասին:
- Տեղեկություն տվյալ գրանվան հաջողության մասին, օրինակ, մամուլի արձագանք:
- Խնամքով կազմված հեղինակավոր ամփոփագրային տեքստ, ինչը ներկայացնում է ժամանակակից հայ գրականությունը:
- Գլխավոր թարգմաններին ու գրագործակալներին ուղարկվող գրախոսելիք տեքստեր:
- Տեղեկություն աջակցության հնարավոր աղբյուրների վերաբերյալ:
- Տեղեկատուներ, բուկլետներ, բրոշյուրներ, որոնք հիմնված են տվյալների բազայում առկա տեղեկությունների վրա, բայց պատրաստվել ու տպագրվել են որևէ կոնկրետ միջոցառման համար, օրինակ՝ տոնավաճառի:

Թարգմանությունը խթանելու պետական աջակցության ծրագրի երեք օրինակ

Երկիրը **ՎՐԱՍՍԱՆ**

Յիմնարկը Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարություն/ վրաց գրքին ու գրականությանն աջակցելու ծրագիր

Տարեկան բյուջեն – N/A

Վեբկայքը <http://www.book.gov.ge/>

Լիազորությունները –

- ֆինանսավորում է օտարերկրյա հրատարակիչներին՝ վրացերենից թարգմանելու և հրատարակելու համար,
- մասնակից է ու համաֆինանսավորում է գրքի միջազգային տոնավաճառների տաղավարները կազմակերպելու ծրագրերը,
- գրական ֆորում ու երկխոսություն. միջազգային ու վրաց հրատարակիչների, թարգմանների ու հեղինակների ամենամյա հավաք Ռեփլիսիում

Գործակիցները՝

- Վրաստանի գրահրատարակիչների ասոցիացիա
- Գյոթեի ինստիտուտ
- Բրիտանական ներկայացուցչություն:

Երկիրը **ՌՈՒՄԻՆԻԱ**

Յիմնարկը Գրքի պետական կենտրոն և Ռումինական մշակույթի ինստիտուտ,

Տարեկան բյուջեն – 900000 եվրո (2010 թվականինը)

Վեբկայքը <http://www.cennac.ro/en/>

Լիազորությունները –

- ֆինանսավորում է օտարերկրյա հրատարակիչներին, որ ռումիներենից թարգմանեն ու հրատարակեն՝ երեք ենթաուղով,
- թռչակ ու բնակարան է տրամադրում ռումիներենից թարգմանողներին, հատուկ ուշադրություն է դարձնում թարգմանների երիտասարդ սերնդի վրա,

- ժամանակակից ռումին հեղինակների վերաբերյալ ընթերցումներ և այլ միջոցառումներ է անցկացնում արտերկրում:

Գործակիցները՝

- EUNIC
- LiteraturHaus, Բեռլին
- Traduki for Romania-ի պաշտոնական գործակիցն է
- Ունի ԶԼՄ-ների մի քանի ռումինական գործակից

Երկիրը **ԼԵՅԱՍԱՆ**

Յիմնարկը Մշակույթի նախարարության Գրքի պետական իստիտուտ

Տարեկան բյուջեն - N/A

Վեբկայքը <http://www.bookinstitute.pl/>

Լիազորությունները -

- ©POLAND-ը ֆինանսավորում է օտարերկրյա հրատարակիչներին, որ լեհերենից թարգմանեն ու հրատարակեն,
- *Sample Translations* ©POLAND-ը լեհական գիրքը ներկայացնում է արտերկրի հրատարակիչներին,
- ապահովում է լեհերենի թարգմանների ծանաչողական այցերը,
- Գրքի ինստիտուտը շնորհում է *Trans-atlantyk Prize* պարգևը՝ արտասահմանում լեհական գրականության լավագույն «դեսպանին»,
- թարգմանական պարգևի հիմնադրամը ամենամյա պարգև է տալիս մեկ կամ ավել թարգմանչի՝ լեհերենից անգլերեն լավագույն թարգմանության համար,
- նոր գրքեր՝ Լեհաստանից –այս տեղեկատուն հրատարակվում է տարին երկու անգամ, երկու լեզվով՝ անգլերեն ու գերմաներեն,
- կազմակերպում է արտասահմանցի հրատարակիչների սեմինարներ՝ լեհերեն գրականությունը թարգմանելու ու արտերկրում հրատարակելու նպատակով:

Մեկնաբանություն Վահրամ Դանիելյան գրականագետ

Թեև ես լավ չեմ տիրապետում մեկնաբանության այն ժանրին, որ պահանջվում է նման նախագծերի հետ համատեղ հրատարակելու համար, սակայն կատարված աշխատանքն այնքան կարևոր ու անհրաժեշտ եմ համարում, որ թեկուզ «դիլետանտիզմի» դիրքերից, այնուամենայնիվ, կուզենայի արտահայտվել նրա մասին:

Ասում են՝ թարգմանությունն ինքնին «կորուստների արվեստ» է, որովհետև որքան էլ հմուտ լինի կատարողը, այդուհանդերձ, կատարված աշխատանքը երկու տարբեր լեզուների միջև գտնված կոմպրոմիս է, իսկ կոմպրոմիսն, ինչպես հայտնի է, երկու կողմերին էլ կարող է միայն մասամբ բավարարել: Մշակույթների երկխոսությունը միջմշակութային կոմպրոմիսի ակտ է, թարգմանությունը այդ ակտի մնայուն վավերացումներից թերևս կարևորագույնը: Շատ կարևոր է տիրապետել նախընթաց «վավերացումների» քարտեզին, որպեսզի իմանաս, թե քեզնից առաջ սկսված երկխոսությունը ինչ հետագիծ է ունեցել:

«Book Platform» նախագծի կատարած աշխատանքն անգնահատելի է անկախության տարիների հայ մշակույթի և գրականության թեկուզ կմկմացող-անկատար, բայց այնուամենայնիվ սկսված երկխոսությունը քարտեզագրելու առումով: Ընտրված 11 լեզուներն անշուշտ չեն կարող ամբողջությամբ ներկայացնել հայ գրականության թարգմանվածության ծավալը, քանի որ ցանկից բացակայում է ռուսերենը, որով թերևս ամենահաճախն է ավանդաբար ներկայացվել մեր գրականությունը: Սակայն կատարված աշխատանքը, զոնե ինձ համար, շատ կարևոր է հայ գրականության ինքնուրույն, առանց սովետական-կայսերական ինտերցիայի ու գործիքների սկած «նավարկությունը» դեպի այլ լեզվական տարածություններ արձանագրելու առումով:

Յետազոտությունը մի շարք կարևոր բացահայտումներ է անում ինձ համար: Ահա դրանցից մեկը. հայտնի է, որ թարգմանությամբ ներկայացվելու առումով արձակն ավելի շահեկան ժանր է, քանի որ պոեզիայի դեպքում «կորուստներն» ավելի մեծ են: Գոնե ես ինձ համար չունեմ համաշխարհային գրականության մեջ որևէ սիրելի բանաստեղծ, ում տեքստն ինձ հասանելի չէ բնագրով և կարդացել եմ միայն թարգմանությամբ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ գրականությունից տոկոսային հարաբերությամբ ամենշատը՝ 16-ական տոկոս, թարգմանվել է ժամանակակից և դասական պոեզիան,

այնինչ արձակի թարգմանության պարագայում մշակութային ճանաչելիությունը համեմատաբար ավելի “անկորուստ” տեղ կհասներ: Գիտեմ որ վիճարկելի է ասածս, բայց այնուամենայնիվ՝

Մյուս հետաքրքիր փաստը, որ, ինձ համար, արձանագրեց վիճակագրությունն այն է, որ թեև մեր պոետները թարգմանվածության առումով ֆավորիտ են, բայց հայ թերևս ամենահայտնի բանաստեղծներից մեկը, եթե ոչ ամենահայտնին՝ Եղիշե Չարենցը, ամենաշատը թարգմանված հեղինակների տասնյակում բացակայում է: Եթե մենք գտնում էինք, որ մեր պոեզիան ամենաներկայանալին է, ապա այդտեղ թերևս առաջինը պիտի լիներ հենց հայ ամենաներկայանալի պոետը:

Գուցե սրանք հարցեր են, որ դուրս են ուսումնասիրությունները կատարողների հետապնդած խնդիրների շրջանակից, բայց ուսումնասիրությունն ինքնին այնքան բազմապլան է, որ իրեն հուզող շատ հարցերի պատասխաններ կարող է գտնել յուրաքանչյուրը, ով հետաքրքրված է հայ գրականության ներկայացվածության քարտեզով ու այդ քարտեզի ձևավորման ռազմավարությամբ:

Կուզենայի իմ շնորհակալությունը հայտնել նախագիծն իրականցնողներին, որովհետև վստահ եմ, որ այն շատերին կարող է օգտակար լինել՝ սկսած դրսում հայ գրականությունն ու մշակույթը ուսումնասիրող մասնագետներից և տարածաշրջանի ինտեգրացիոն գործընթացներով զբաղվող NGO-ներից մինչև հայ գրականության պրոպագանդմաբ զբաղվող հրատարակչություններ, թարգմանիչներ և անհատ հեղինակներ:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արևիկ Աշխարոյան, 1-ին գրական գործակալություն

Չետագոտությունների որակի մասին

Չետագոտությունները ընթերցելիս ստեղծվեց այնպիսի տպավորություն, որ հետագոտողներից ոմանք իրականում չեն հասկացել, թե ի՞նչ ու ի՞նչո՞ւ են անում: Պատմական ներածություններից մի քանիսը հետաքրքիր էին և օգտակար, բայց մյուսները չափազանց երկար էին, գրքային, ու ժամանակի զուր ծախս են սույն հետագոտության շրջանակներում ընթերցելու համար: Չետագոտողներից մի քանիսը բացարձակ չեն հասկացել իրենց ուսումնասիրության նպատակը և, փոխանակ օբյեկտիվ իրականությունը ներկայացնելու, փորձել են գունագարդել վիճակը: Եթե մեկնումեկը փորձի պարզել հայերենից թարգմանելու իրական վիճակը, կտեսնի, որ ուսումնասիրություններից մի քանիսը ոլորտի իրական նկարագիրը չեն տալիս, այլ ամենայն ջանք է թափում, որ հնարավորին շատ տեղեկություն տրվի, սակայն ոչ թե հրատարակված գրքերի, այլ գրական ամսագրերում ու պարբերականներում, ինչպես նաև անթուղգիաներում լույս տեսած նյութերի մասին, որոնք սակայն մեծամասամբ վաճառքի համար չեն: Չետագոտողների մեծ մասը այնպիսի գրքեր է հիշատակում, որոնք ոչ մի կապ չունեն հայ գրականության հետ, ինչը նշանակում է, որ նրանք հարմար չեն այսպիսի հետագոտության համար, որը վերաբերում է այն գրքերին, որոնց բնագրերը հայերեն են: Ասվածի մի քանի ցայտուն օրինակը հետագոտողներում հաճախ հիշատակած հետևյալ երեք հեղինակներն են՝ Վիլյամ Սարոյան, Ֆրանց Վերֆել և Պիտեր Բալաքյան:

Չետագոտողներից մի քանիսը չի հիշատակում գրքի բնագրի լեզուն, փոխարենը՝ հիշատակում է հայ հեղինակի հրատարակությունը տվյալ լեզվով: Այս գրքերի մի մասը հավանաբար ոչ թե թարգմանություն է, այլ հայ հեղինակների հրատարակում՝ տվյալ լեզվով (օրինակ՝ սերբերենով, Բաբկեն Սիմոնյանի գրքերը): Այս նույն խնդիրը հիշատակել են նաև այն մասնագետները, ովքեր մեկնաբանել են ուսումնասիրությունները: Չետագոտողներից ոմանք էլ հիշատակում են գրքի թարգմանությունը տվյալ լեզվով, բայց չեն ասում, որ այդ գիրքը թարգմանված է ոչ թե հայերենից, այլ մեկ ուրիշ լեզվից: Ի տարբերություն ուկրաիններեն ուսումնասիրության, որտեղ հստակ նշված է, որ

մի քանի աշխատանք թարգմանվել է ռուսերենից, վրացերենի ուսումնասիրությունը սա չի նշում, այնինչ մենք տեղեկություն ունենք, որ բազում թարգմանություններ արվել են կամ ռուսերենից, կամ բառացի (подстрочный) թարգմանության միջոցով (ինչը, ճիշտն ասած, ավելի գերադասելի է, քան առաջին տարբերակը):

Երբ ես, որպես գրական գործակալ, արտերկրում որևէ գիրք հրատարակելու մասին եմ խոսում, նպատակս արտասահմանյան հրատարակչությանը այդ գրքի թարգմանության իրավունքը վաճառելն է, քանի որ հրատարակիչը պետք բոլոր ձիսկերը իր վրա վերցնի և հետո էլ կազմակերպի այդ գրքի գովազդն ու վաճառքը: Եվ նպատակս երբեք էլ գիրքը հայերի փոքր հրատարակչություններում տպագրելը չէ, որովհետև այդ դեպքում ողջ տպաքանակը հիմնականում բաշխվում է միայն հայ համայնքում: Մեր նպատակն է, որպիսի հայ հեղինակների գրքերի ընթերցողը, առաջին հերթին, ոչ թե հայ համայնքը լինի, այլ այդ երկրի բնիկները, ովքեր Հայաստանի մասին շատ ավելի քիչ տեղեկություն ունեն, ու այս գրքերը պիտի նրանց առաջին անգամ ծանոթացնեն մեր երկրի հետ: Իհարկե, հայկական մեծ ու ակտիվ համայնքները երբեմն նպաստում են դրան, բայց այսպիսի դեպքերը քիչ են: Ես փորձել եմ մի քանի երկրի հայ համայնքին դիմել խնդրելով, որ ինձ տեղեկություն տան այն թարգմանիչների, հրատարակիչների ու հիմնադրամների մասին, ովքեր կօգնեին իմ գործին, բայց իմ բոլոր ջանքերը դրական արդյունք չեն տվել:

Դիտողություններ ստեղծված իրավիճակի և ոլորտի քաղաքականության բարելավման վերաբերյալ

Ես լիովին համաձայն եմ եվրոպական մասնագետների դիտողությունների հետ, և կուզեի մի քանի մեկնաբանություն էլ ինքս անել՝ վիճակը փոխելու նպատակով նրանց տված խորհուրդների վերաբերյալ ու կիսել սեփական փորձս:

1. Օգնություն գրական գործակալներին

Ես համարում եմ, որ իրավունք վաճառող գրական գործակալներն ու հրատարակիչներն այն միակ անձինք են, ովքեր հնարավորություն ունեն տվյալ գրականությունը մեկ այլ երկիր տանելու ու այն մատչելի դարձնելու ընդհանուր ընթերցողին: Ես չեմ հավատում, թե պետական կամ այլ հովանավորությամբ անթուղզիաների հրատարակման նախագծերի արդյունավետությանը: Այսպես հրատարակված գրքերը գրախանութներում չեն վաճառվում, և այդ գրքերը մնում են միայն դեսպանություններում կամ հայ համայնքներում, որտեղ դրանք ներկայացնում են ընթերցողների մի ինչ-որ անհայտ խմբի, խումբ, որը շատ անգամ դրանք չի էլ կարդում:

Իսկ այն գրքերը, որոնք հրատարակիչներն իրենք են տպագրում և գովազդվում, դրանք հայտնվում են գրախանութներում և հասնում են այն իսկական գրասերներին ու այն ընթերցողին, ովքեր ընտրում ու վճարում դրանց համար ու, ի վերջո, կարդում: Ասածս այն է, որ մենք, ճիշտն ասած, այս առաքելության համար ավելի շատ գրական գործակալի ու գրական գործակալությունների կարիք ունենք: Սակայն գրական գործակալ լինելը նշանակում է, որ դու տարիներով քո անձնական դրամական միջոցներն ու ժամանակն ես ներդնում այս գործի մեջ, մինչև տեսանելի արդյունք ստանալը: Ուրեմն, պետությունը պետք է օգնի գրական գործակալություններ հիմնելուն ու նպաստի դրանց գործունեությանը՝ գոնե գրքի տոնավաճառներին մասնակցելու առումով:

Ես ինքս գրական գործակալ եմ, և փորձել եմ այս հարցով համագործակցել ՀՀ մշակույթի նախարարության հետ, խնդրելով, որ վերջինս ինձ գրքի տոնավաճառներին մասնակցելու մասնակի աջակցություն ցուցաբերի: Բայց նախարարությունն ինձ պատասխանել է, թե գործակալությունը մասնավոր ձեռնարկություն է, իսկ պետությունը չպետք է օգնի մասնավոր բիզնեսին: Բայց ակնհայտ է, որ գրական գործակալությունը չի կարող Հայաստանի պես երկրում համարվել բիզնես՝ գոնե իր գործունեության սկզբնական շրջանում: Կարիք կա 5 տարվա մի այնպիսի ծրագրի, որը կօգներ Հայաստանում գրական գործակալությունների հիմնադրմանը ու կաջակցեր գրական գործակալների աշխատանքին, ինչը և կլիներ առաջին կարևորագույն քայլը հայ գրականությունը թարգմանաբար ներկայացնելու հարցում:

2. Աջակցություն արտասահմանյան հրատարակիչներին՝ հայ գրականությունը թարգմանելու ու գովազդելու հարցում:

Հույժ կարևոր է, որ մի հիմնադրամ կամ Գրքի կենտրոն ստեղծվեր, ինչը կօգներ հայ գրականությամբ հետաքրքրված արտերկրի հրատարակիչներին: Իմ անձնական փորձը ցույց է տալիս, որ թարգմանությանը տրվող դրամաշնորհը շատ լուրջ խթան է, որպեսզի հրատարակիչներից շատերը օտար ու անհայտ գրականությունը հրատարակելու որոշում կայացնեն: Մյուս կողմից, այսօրինակ հիմնարկը կարող էր հայտարարել իր առաջնահերթ ուղղություններն ու ամենամյա դրամաշնորհներ տրամադրել հրատարակիչներին՝ ա՛յն հատուկ հեղինակների հրատարակման համար, որոնք կարևոր են երկրի մշակույթը ներկայացնելու համար: Այս ձևով մենք կկարողանայինք հայ գրականությունը հրատարակել արտերկրում ու հետաքրքրություն առաջացնել մեր երկրի ու մեր մշակույթի նկատմամբ:

Այս առումով ես ինքս մի նախաձեռնության մասնակից եմ: Տեղական հրատարակիչներից մեկի նախաձեռնությամբ այս պահին Հայ գրականության հիմնադրամը ստեղծման փուլում է, որը պետք է հայ գրականությունը գովազդողի դերն ունենա ու թարգմանական

դրամաշնորհներ տրամադրի: Մենք սա քննարկել ենք Մշակույթի նախարարի հետ, ու վերջինս համաձայնել է աշխատել մեր այս Յիմնադրամի հետ, նախագծերի ֆինանսավորամն հիմունքով, ինչը նշանակում է, որ նախարարությունը չի ուզում ուղակի ներդրում անել, այլ միայն հովանավորելու է առանձին գրքերի թարգմանությամբ: Բայց այս համաձայնությունն առայժմ միայն բանավոր է, ոչ մի փաստաթուղթ կամ պայմանագիր չի կնքվել, ու սոսկ ապագա գործակցության մի շատ անորոշ հույս է:

3. Հայերենից թարգմանիչների զգալի պակասը

Հայերենից թարգմանիչների զգալի պակասն ա՛յն դժվարությունն է, ինչը պետք է հաղթահարենք՝ նախքան հայ գրականության գովազդը սկսելը: Առաջին գրական գործակալությունը հիմնելու օրվանից՝ ես հայերենից այլ լեզուների թարգմանիչների տվյալների շտեմարան եմ կազմում: Կան շատ լեզուներ, այդ թվում՝ նաև եվրոպական բավական հանրահայտ լեզուներ, որոնց թարգմանիչներին դեռ չենք գտել: Ես այդ երկրներում Հայաստանի դեսպանությունների միջոցով փորձում եմ գտնել գրական թարգմանիչների:

Իհարկե, շատ կան թարգմանիչներ, ովքեր գուցե որակով են թարգմանում իրավաբանությամբ կամ բիզնեսին վերաբերող փաստաթղթերը, բայց գեղարվեստական թարգմանության փորձ չունեն: Լավ թարգմանիչ ունենալու համար պետք է նախ նրանց գործ տանք ու հետո արդյունքի հիման վրա ընտրենք լավագույններին կամ պայմաններ ստեղծենք, որ նրանք հենց իրենք կատարելագործվեն, եթե ունեն որոշակի ներուժ: Բայց սա այնպիսի բան չէ, որ գրական գործակալն անի կարծ ժամկետում: Այստեղ արդեն պետական քաղաքականություն է հարկավոր, հարկավոր է մի ծրագիր, թարգմանիչներին հայտնաբերելու ու վերապատրաստելու համար:

Համալսարանների հայոց լեզվի բաժինների հարցը ռազմավարական մեկ այլ դժվարություն է, ինչը պետությունը դեռ պետք է բարելավի: Լավ կլիներ, որ հայոց լեզվի բաժիններ բացվեին նաև արտերկրի համալսարաններում: Սա կօգներ, որ այնպիսի թարգմանիչներ, խմբագիրներ ու այլ մասնագետներ պատրաստվեին, ովքեր հետագայում կօգնեին, որ այդ երկրներում հայ գրականությունը թարգմանվեր:

